



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի երրորդ համարը: Հոդվածներ են ներկայացված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «Բուհական գրադարաններ», «Գրադարանային վիճակագրություն և վերլուծություն», «Գրքագիտություն», «Գրադարանային համաժողովներ», «Մշակութային ժառանգություն», «Գրադարան. տեսություն և պրակտիկա»: Ներառված են նաև հաղորդումներ:

Ընթերցողի դատին ենք ներկայացնում «Շարժական մատենադարան» խորագրով հոդվածը՝ տպագրված Թիֆլիսի «Մանկավարժանոց» ամսագրում (1884 թ., թ. 1, էջ 48-51): Ուրախալի է, որ 19-րդ դարավերջին հայ մանկավարժական միտքը ծանոթ է եղել համաշխարհային գրադարանային գործի կազմակերպման սկզբունքներին, և հոդվածում արտահայտված մտքերը արդիական են նաև այսօր:

Անդրադարձ կա հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովին: Հաճելի է փաստել, որ համաժողովը դառնում է ավանդական, որի համար երախտապարտ ենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ՀՀ Մշակույթի նախարարությանը:

Ներկայացված են Հայաստանի գրադարաններում անցկացված հետազոտությունների արդյունքները, որոնցում կիրառված են գրադարանային շուկայաբանության և գրադարանային վիճակագրության մեթոդները:

Լիահույս ենք, որ նման հետազոտությունների քանակը ժամանակի ընթացքում կավելանա:

ՀՊՏՀ ԵՎ ՀՊՄՀ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

(համեմատական վերլուծություն)

Բանալի բառեր՝ գրադարան, գրադարանային վիճակագրություն, գրադարանների պատմություն, գրադարանային կրթություն:

Keywords. library, higher educational institutions, library statistics, libraries history, library education

1988 թ. հունվարի 1-ի տվյալներով Հայաստանը եղել է Խորհրդային Միության ամենակարգացող երկրներից մեկը, քանի որ ընթերցողների թիվը հատում էր մեկ միլիոնի սահմանը: Մեծ պահանջարկ էր ներկայացնում գրադարանավարի մասնագիտությունը:

Այսօր Հայաստանում ընթերցողների թիվը եռակի անգամ քիչ է: Սա պարզ է դառնում վիճակագրական տվյալներից, որոնք ամեն տարի Հայաստանի ազգային գրադարանը տրամադրում է հանրությանը¹: Այդ տվյալները վերցվում են ՀՀ Վիճակագրական վարչության բազայից և հնարավորինս ամբողջական ներկայացնում են ՀՀ տարածում գործող գրադարանների ընդհանուր թիվը, գրականության տացքը, ընթերցողական կազմը և այլն: Բացի սրանից, Հայաստանի ազգային գրադարանի Բիբլիոթեկա-տարվա կտրվածքով լինում է գրեթե բոլոր մարզերի և գյուղական համայնքների գրադարաններում՝ տրամադրելով նոր գրականություն: Այցերի ընթացքում պարզ է դառնում, թե ինչ «տխուր» վիճակ է տիրում հատկապես գյուղական գրադարաններում: Առկա են բազմապիսի խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է ուսումնասիրություններ անցկացնելու դեպքում:

Այսօր գրադարանային համակարգում վիճակագրական լուրջ ուսումնասիրություններ, ցավոք, չեն անցկացվում: Յուրաքանչյուր գրադարան փորձում է իր խնդիրները լուծել ինքնուրույն՝ իր բյուջեի, աշխատակազմի գործունեության հիմքի վրա: Այս առումով ավելի շահավետ պայմաններում են գտնվում հատկապես բուհական գրադարանները, որոնք ֆինանսավորվում են տվյալ բուհական համակարգի կողմից: Որոշ գրադարաններ կարողանում են գտնել լուծումներ, իսկ մի մասն էլ այդպես մնում է խնդիրների հորձանուտում: Հուսով ենք, որ մի օր

¹ Տե՛ս «Հայաստանի գրադարանները: Վիճակագրական վերլուծություն» գրքույկի ամենամյա հրատարակությունները:

գրադարանային մարքեթինգը ամուր հիմքերի վրա կկանգնի, ինչը հնարավորություն կտա համակարգային փոփոխություններ կատարել գրադարաններում:

Դիտարկենք երկու բուհական գրադարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանը հիմնադրվել է 1975 թ. հոկտեմբերին՝ բուհի հիմնադրման հետ միաժամանակ: Գրադարանի առաջին վարիչն է եղել Դոնարա Փալանջյանը, 1994 թվականից գրադարանը ղեկավարել է Վեներա Ավալյանը, իսկ 2013 թվականից գրադարանի տնօրենն է Արմինե Հովհաննիսյանը: Երևանի պետական համալսարանից ստացած ոչ հարուստ ֆոնդը (մոտ 40.000 միավոր) տարիների ընթացքում համալրվել է դասագրքերով, գեղարվեստական գրականությամբ, գիտական ամսագրերով, ատլասներով, բառարաններով. այժմ այն կազմում է մոտ 180.000 միավոր: Հիմնադրման տարիներին գրադարանը սպասարկել է մոտ 1000 ընթերցողի, այժմ գրադարանը ունի 7000 ընթերցող՝ ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը: Գրադարանը սպասարկում է միայն համալսարանի աշխատակազմին և ուսանողներին, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09⁰⁰-17⁰⁰: Գրադարանն ունի իր կայքը, ուր տեղադրված է ամփոփ տեղեկատվություն գրադարանի մասին, ինչպես նաև արտացոլված են գրքերի գրառումների էլեկտրոնային տարբերակները, թվային ռեսուրսները: 2008 թ. հունվարին ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենքից գրադարանը տեղափոխվել է համալսարանի նորակառույց թիվ 5 մասնաշենք:

Գրադարանի ֆոնդերի համալրման հիմանական աղբյուրը գնումներն են, նվիրատվությունները և բաժանորդագրությունը: Ֆոնդերում պահպանվող գրականության գերակշիռ մասը՝ մոտ 160.000 միավոր, ուսումնական ձեռնարկներ են, դասագրքեր, գիտական աշխատություններ: Գրադարանում կա նաև գեղարվեստական գրականություն, բառարաններ, ատլասներ:

Գրադարանն այսօր համալրվում է 25 անուն թերթերով և ամսագրերով: Ընթացքի մեջ են էլեկտրոնային գրադարանի և էլեկտրոնային գրացուցակի համալրման աշխատանքները, որոնք հնարավորություն կտան ոչ միայն պահպանել գրքային ֆոնդը, այլև լավացնել սպասարկման որակը: Գրադարանում են պահվում ՀՊՏՀ-ում գործող մասնագիտական խորհրդում պաշտպանված ատենա-

խոսություններն ու դրանց սեղմագրերը, ինչպես նաև այլ բուհերում պաշտպանված սեղմագրերի օրինակները:

Գիտակցելով ժամանակակից գրադարանների դերն ու նշանակությունը, զուգակցելով աշխատանքի ավանդական և նոր մեթոդները՝ գրադարանն իրագործում է ֆոնդերի շարունակական համալրում՝ օգտագործելով էլեկտրոնային ռեսուրսները, համագործակցում է համալսարանի այլ ստորաբաժանումների, ամբիոնների, այլ համալսարանների հետ, փորձում է գտնել սպասարկման նոր, նաև ուսանողների հետ հետադարձ կապի ձևեր:

Գրադարանի բաժիններն են՝

1. Համալրման բաժին
2. Սպասարկման բաժին
3. Գրապահոց

Համալրման, մշակման և մատենագրության բաժնում կազմակերպվում է գրքային ֆոնդի համալրումը, համապատասխան մատյաններում գրանցվում են նոր գրքերը, կազմվում և խմբագրվում են քարտարանները, ելնելով գրադարանային դասակարգման պահանջներից՝ կատարվում է գրքերի մշակում, վերահսկվում է գրքի շարժը գրապահոց, գրանցվում են ընթացիկ մամուլի ստացումները, վերահսկվում է հին, ակտավորված գրականության դուրսգրումը: Կազմվում և բուհի համապատասխան ստորաբաժանումներին են ներկայացվում թերթերի, գիտական ամսագրերի, տեղեկատու հրատարակությունների ցանկը: Այս բաժնում են կատարվում էլեկտրոնային գրացուցակի, սեղմագրերի և ընթացիկ մամուլի մասնագիտական հրապարակումների քարտարանների ստեղծման աշխատանքները:

Սպասարկման բաժինը կատարում է ընթերցողների գրանցում, իրականացնում է գրադարանային սպասարկումը, ուղղորդում է ընթերցողին դեպի գրացուցակներ, գրապահոցից պատվիրված գրականությունը հանձնում է ընթերցողին: Սպասարկման բաժնի մեջ են մտնում ընթերցասրահները, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է առանձին խմբի աշխատանքների կազմակերպման համար: Գեղեցիկ կահավորված, լուսավոր ընթերցասրահներն ամեն օր սպասարկում են շուրջ 50 ուսանողների, դասախոսների և բուհի այլ ստորաբաժանումների աշխատակիցների: Ընթերցասրահները համալրված են համակարգիչներով, ինչն

ինչն ընթերցողներին հնարավորություն է տալիս օգտվել համացանցից, էլեկտրոնային գրադարանից, ծանոթանալ օրվա մամուլին: Գրադարանում գործում են Մուշեղ Ադոնցի անվան գիտական և երեք ուսանողական ընթերցասրահներ: Եվս մեկ ընթերցասրահ գործում է Քանաքեռ-Զեյթուն համայնքում գտնվող Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում:

Գրապահոցում է պահվում գրադարանի գրքային ողջ ֆոնդը: Համալրման բաժնից ստացված գրականությունը դասակարգվում է ըստ գիտության ճյուղերի և դասավորվում գրադարանների վրա այբբենական կարգով: Այս բաժնում գրքերի պահպանման համար ստեղծված են հակահրդեհային և սանիտարահիգիենիկ պայմաններ: Ընթերցողների մուտքը գրապահոց արգելված է :

Յուրահատուկ է ՄԱԿ-ի անկյունը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ՄԱԿ-ի գրականության անկյունը բացվել է 2013 թ. ապրիլին ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակի և ՀՊՏՀ միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում: Այն տեղակայված է ՀՊՏՀ գրադարանի գիտական ընթերցասրահում: ՄԱԿ-ի հրատարակությունների ֆոնդը այսօր ներառում է ավելի քան 850 միավոր անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Մշտապես թարմացվող և համալրվող ՄԱԿ-ի գրականությունը պարունակում է նյութեր ՄԱԿ-ի արժեքների, գլոբալ օրակարգի, մարդու իրավունքների, տարածաշրջանային խնդիրների, սոցիալական քաղաքականության, տնտեսական համագործակցության, ժողովրդագրական գործընթացների քաղաքացիական հասարակության զարգացման, շրջակա միջավայրի պահպանության և այլ խնդիրների վերաբերյալ: Համալսարանը ՄԱԿ-ի անկյունը օգտագործում է նաև ՄԱԿ-ի հետ կապված մշակութային, կրթական և այլ միջոցառումների կազմակերպման համար:

ՄԱԿ-ի անկյան պատասխանատուն է Նաիրա Անդրյանը:

Միջանցքում տեղակայված են քարտարանները, որոնցով կատարվում է սպասարկումը: Կա գրքերի առանձին ֆոնդ, որը ընթերցասրահից դուրս չի սպասարկվում: Եթե տվյալ գիրքն անհրաժեշտ է ուսանողին, ապա սկանավորվում է և տրամադրվում էլեկտրոնային տարբերակով: Միջանցքում տեղադրված են հատուկ ցուցափեղկեր, որոնց մեջ ներկայացված են նոր գրքերն ու ամսագրերը: Կան նաև առանձին անկյուններ, ուր ներկայացված են ամսագրեր՝ առձեռն օգտվելու համար: Գրադարանը համալրվել է նոր տեխնոլոգիայով, ընթերցասրահներում տեղադրված են համակարգիչներ և հնարավորություն՝

համացանցից օգտվելու համար: Կազմակերպվում են համար: Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ՝ ներգրավելով թե՛ համալսարանի անձնակազմին, թե՛ ուսանողներին:

Ներկայացնենք մի քանի վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացնում են 2014-2015 թթ գրադարանի ընթերցողների թիվը, տացքը և այլ մանրամասներ:

№	Ցուցանիշներ	2014թ.	2015թ.	Տարբերություն
1	2	3	4	5
1	Ընթերցողների թիվը	8053	8200	+147
2	Հաճախումների թիվը	160530	325000	+164470
3	Գրքային ֆոնդի քանակը	183.087	185.992	+2905
4	Համալրված գրականության քանակը			
	Անուն, միավոր	267/178 0	311/2233	+44/+453
5	Տացք			
ա.	Գրքային հրատարակություն	145120	445940	+300820
բ.	Չհրատարակված/ատենախոս.,ամսագր	75	100/320	+25/+320
գ.	Էլ.սպասարկ./գրքեր, այլ ռեսուրսներ/	-	38	+38

6	Նվիրատվության կարգով ստացվել է			
	Անուն	240	26	-214
	Միավոր	474	250	-224
7	Ստացվել է օտարալեզու գրակ.			
	Անուն /նվեր/	110	5	-105
	Միավոր	330	15	-315
8	Ստացվել է պարբերական հրատ.			
	Անուն	22	27	+5
	Այդ թվում՝ հայկական պարբ. հրատ.	15	17	+2
	Անուն / 5 օտարալեզու/	-	5	+5
9	Գրադարանի աշխատողների թիվը	17	20	+3
	Այդ թվում 1-ից 5 տարվա աշխատանք. ստաժ	16	18	+2
10	Ֆինանսական միջոցների ստացում			
	Այդ թվում՝ բուհի միջոցներից	-	1.500768	+1500768
	Պետական բյուջեից	-	-	-
	Այլ եկամուտներ	-	-	-
	Դրամաշնորհ	-	-	-

Համալրված գրականության մեջ կարևոր են նվիրատվությունները, որոնք 2014թ. Կազմել են 240 անուն կամ 474 միավոր: Մնացածը ձեռք է բերվել

գնումների միջոցով: Գրադարանի ֆինանսական աղբյուրը բուհն է, որն էլ տրամադրում է համապատասխան գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանը հիմնադրվել է 1922 թ.' 190 կտոր գրականության ֆոնդով: Նորաստեղծ գրադարանին Հանրային գրադարանը (հետագայում՝ Ալ. Մյասնիկյանի անվան, ներկայումս՝ ՀՀ ազգային գրադարան) և Երևանի պետական համալսարանը տրամադրել են շուրջ 4000 օրինակ գիրք: Առաջին գրադարանապետը եղել է Մուշեղ Գասպարյանը, որի ջանքերով Սբ. Էջմիածնի Մատենադարանից բերվել է ևս 1000 օրինակ հայագիտական և պատմագիտական գրակա

նություն: Նա գործուղվել է Մոսկվա, հանդիպել Ն. Կ. Կրուպսկայայի հետ և խնդրել գրադարանը պարբերաբար համալրել տպագիր արտադրանքով: 1937-1939 թթ. գրադարանը ներառվել է գրադարանների այն ցուցակի մեջ, որոնք ստանում էին անվճար և վճարովի պարտադիր օրինակներ Մոսկվայի և Երևանի գրապալատների միջոցով:

Մանկավարժական համալսարանի տնօրեններն են եղել.

Դուխիկ Մովսիսյանը՝ Մոսկվայի կուլտուրայի ինստիտուտի գրադարանային ֆակուլտետի շրջանավարտ (մինչև 1961 թ.): Նրա օրոք գրքային ֆոնդը հասել է 134.000 միավորի:

Ադրինե Աբելյանը՝ ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար (1961-1995 թթ.):

Տիգրան Հովհաննիսյանը (1995-2009 թթ.):

Տիգրան Պետրոսյանցը (Տիգրան Հայազնը) (2009-ից):

1972 թ. գրադարանն ուներ 400.000 կտոր գրականություն: 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանն ունեցել է ավելի քան 630.000 օրինակ գիրք, որից 325.000-ը՝ ուսումնական, 240.000-ը՝ գիտա-տեղեկատվական, 65.000-ը՝ գեղարվեստական:

Գրադարանն ունի 24 օրինակ հնատիպ, ավելի քան 3000 արժեքավոր գիրք, 768 նախախորհրդային հայկական ամսագիր: Գրադարանի մատենագրության բաժնում պահվում է 702 ատենախոսություն և 758

սեղմագիր: Գրադարանը ստանում է 17 անուն թերթ ու 82 անուն գիտատեսական ամսագիր:

Գրադարանի ընթերցողների սպասարկումն իրականացվում է երկու արձանեմենտների, ընթերցասրահի, գիտական կաբինետի միջոցով, զգալի տեղ է հատկացվում էլեկտրոնային տեղեկատվությամբ ապահովմանը գիտական կաբինետում տեղակայված և համացանցին միացված համակարգիչների միջոցով:

Գրադարանի գրքային ֆոնդի հարստացումը կատարվում է հիմնականում համալսարանի միջոցներով, ստանում են նաև բազմաթիվ նվիրատվություններ:

ՀՊՄՀ գիտական գրադարանը ստեղծվել է 1922 թ-ի սեպտեմբերի 30-ին:

Գիտական գրադարանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- * սպասարկման,
- * համալրման և մշակման,
- * գրապահոցի,
- * մատենագիտության,
- * համակարգչային ծառայությունների և ավտոմատացման:

Գիտական գրադարանն ունի նաև հումանիտար գրականության, բնագիտամաթեմատիկական գրականության և մամուլի սպասարկման ընթերցասրահներ:

Գրադարանից օգտվելու իրավունք ունեն ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ասպիրանտները, հայցորդները, ուսանողները, ավագ դպրոցի ուսուցիչները և աշակերտները, այլ ԲՈՒՀ-երի դասախոսները և ուսանողները, քաղաքացիները, գիտական գրադարանի «Պատվո ընթերցողները»:

Ընթերցողական տոմսը ընթերցողին իրավունք է տալիս, տնօրինության կողմից սահմանված կարգով, օգտվելու գիտական գրադարանի ծառայություններից: Այն տրվում է որոշակի ժամկետով՝ կախված ընթերցողի համալսարանական կարգավիճակից. բակալավրիատի ուսանողների համար՝ չորս տարի, մագիստրատուրայի ուսանողների համար՝ երկու տարի, ասպիրանտների և հայցորդների համար՝ երեք տարի, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համար՝ նրա հետ կնքած պայմանագրի տևողությամբ, այլ ԲՈՒՀ-երի ներկայացուցիչների, քաղաքացիների համար՝ մեկ տարի, «Պատվո ընթերցողների» համար՝ անժամկետ:

Գրադարանն ունի <http://mankavarzh.do.am> էլեկտրոնային կայքը: Մուտք գործելով կայքի «Գրապահոց» բաժնի հետևյալ հասցե՝ [www. armunicat. am](http://www.armunicat.am): 8991 / ARMA, ընթերցողը կարող է փնտրել իրեն հետաքրքրող գիրքը՝ նշելով կամ նրա վերնագիրը, կամ հեղինակի անունը, հրատարակման տարեթիվը,

տեղը, գրքի թեմատիկան, ձևաչափը, ճշտել որ գրադարանում կա տվյալ գիրքը և կատարել էլեկտրոնային պատվեր: Էլեկտրոնային քարտարանում մուտքագրված է մոտ 1,5 միլիոն միավոր գրականություն:

Ներկայացնենք մի քանի վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացնում են ը2014-2015թթ գրադարանի ընթերցողների թիվը, տացքը և այլ մանրամասներ:

№	Ցուցանիշներ	2014թ.	2015թ.	Տարբ.
1	2	3	4	5
1	Ընթերցողների թիվը	21287	21313	+26
2	Հաճախումների թիվը	1201627	1328338	+126711
3	Տացքը	3124212	3825198	+70098 6
4	Գրքային ֆոնդի քանակը	606613	517496	-89117
5	Համալրված գրականության քանակը			
	Միավոր	7778	10883	+3105
	Էլեկտր.տարբ.գրականության փոխանցում տացք-	950000	1599821	+649821
	Ուսան. եւ ընթերց. առաքվել է էլ. գիրք	-	12000	+12000
6	Նվիրատվության կարգով ստացվել է			
	Միավոր	7311	10596	+3285
7	Ստացվել է օտարալեզու գրականութ.			
	Միավոր	158	264	+106
8	Ստացվել է պարբերական հրատարակ.			
	Անուն	42	43	+1
	Այդ թվում՝ հայկական պարբ. հրատ.			

	Անուն	24	25	+1
9	Գրադարանի աշխատողների թիվը	22	25	+3
10	Ֆինանսական միջոցների ստացում	3407610	3224232	-183378
	Այդ թվում՝ համալսարանի միջոցներից	3407610	3224232	-183378

Թե ինչ հետաքրքրություններ ունեն ընթերցողները կամ ինչ առաջարկներ ունեն ընթերցավարները, փորձել ենք պարզել մի քանի հարցման միջոցով: Այդ հարցումների հիման վրա եզրակացություններ անել, իհարկե, հնարավոր չէ, սակայն կարելի է բնութագրել որոշ երևույթներ:

Ստորև ներկայացնում ենք հարցումների օրինակներ.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ

Սեռը իգական Տարիքը 18

Կրթությունը բակալավր

Մասնագիտությունը հաշվապահություն

Ապրելու վայրը Երևան

Ինչու՞ եք նախընտրում այս ընթերցասրահը:

 Այստեղ առկա է այն գրականությունը, ինչը հետաքրքրում է ինձ:

Ինչքա՞ն հաճախակի եք այցելում:

 Գրեթե ամեն օր:

Ի՞նչ գրականություն եք ընթերցում:

 Հիմնականում մասնագիտական:

Բացի մասնագիտական գրականությունից կարդում եք արդյո՞ք գեղարվեստական գրքեր:

 Ոչ, ժամանակ չեմ ունենում:

Ուղղակի ընթերցելու համար հաճախո՞ւմ եք գրադարան:

 Ոչ, նորից ժամանակի խնդիր է:

Ընթերցանության ո՞ր տեսակն եք նախընտրում՝ էլեկտրոնային կամ թղթային և ինչու՞:

Թղթային, քանի որ ավելի հեշտ է ուսումնասիրություն կատարելը:

Ընթերցավարի սպասարկման ձևը արդյո՞ք նշանակություն ունի Ձեզ համար

Իհարկե, քանի որ բարեհամբույր վերաբերմունքը միշտ էլ հաճելի է:

Ընթերցասրահի արտաքին պայմանները արդյո՞ք նպաստում են, որ հաճախեք այս ընթերցասրահը:

Ոչ, սակայն հաճելի է աշխատել հարմարավետ պայմաններում

Խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին ընթերցելու համար հաճախել այս ընթերցասրահ:

Այո, իհարկե:

Ի՞նչը կփոխեիք այս ընթերցասրահում:

Կարծում եմ՝ ոչինչ էլ չեմ փոխի:

Ին՞չն է Ձեզ դուր գալիս այս ընթերցասրահում:

Լռությունը

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ԸՆԹԵՐՑԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Սեռը _____ իգական _____

Տարիքը _____ 39 _____

Կրթությունը _____ բարձրագույն _____

Մասնագիտությունը _____ գրադարանավար _____

Ապրելու վայրը _____ Երևան _____

Հաճույքո՞վ եք աշխատում ընթերցասրահում:

Այո, ուսանողների հետ շփումը շատ հետաքրքիր է:

Քանի՞ ընթերցող է այցելում ընթերցասրահ մեկ օրում:

Շուրջ 70 ընթերցող:

Ինչքա՞ն է մեկ օրվա սպասարկված գրականության տացքը:

85-90 միավոր:

Ինչպիսի՞ գրականություն է ընթերցվում ավելի շատ՝ մասնագիտական, թե՞ գեղարվեստական:

Մասնագիտական, _____ քանի _____ որ _____ բուհական _____ ընթերցասրահ է:

Պահանջված գրականությունն ամբողջությամբ բավարարվո՞ւմ է, իսկ եթե ոչ՝ ի՞նչ եք անում:

Հիմնականում բավարարում է, իսկ հակառակ դեպքում օգտվում ենք էլեկտրոնային աղբյուրներից:

Ուղղակի ընթերցելու համար հաճախում են գրադարան:

Այո

Ընթերցանության ո՞ր տեսակն են նախընտրում՝ էլեկտրոնային, թե թղթային:

Երկու տեսակն էլ նախընտրում են:

Ընթերցասրահի արտաքին պայմանները արդյո՞ք նպաստում են, որ հաճախեն այս ընթերցասրահը:

Այո, հատկապես տեխնիկական հագեցվածությունը:

Ընթերցողական ո՞ր տարիքն է գերիշխում:

17-21 տարեկանները:

Ինչ՞ը կփոխեիք՝ նոր ընթերցողներ գրավելու համար

Ներկայումս բոլոր աշխատանքներն ուղղված են սպասարկման որակի բարձրացմանը:

Հարցումների միջոցով պարզ դարձավ, որ երկու գրադարաններում էլ գերակշռում է ընթերցողների երիտասարդ տարիքը, ՀՊՏՀ գրադարանի ընթերցասրահի հաճախում է յուրաքանչյուր օր շուրջ 80 ընթերցող, սպասարկվում է մոտ 90

միավոր գրականություն, մինչդեռ ՀՊՄՀ գիտական գրադարանը սպասարկում է օրական շուրջ 150 ընթերցողի, ավելի քան 250 միավոր գրականություն: Պարզ դարձավ, որ երկու գրադարաններում էլ ընթերցվում է ավելի շատ մասնագիտական գրականություն, ինչը պայմանավորված է բուհական գրադարան լինելու հանգամանքով, գեղարվեստական գրականություն ավելի շատ ընթերցվում է ՀՊՄՀ գրադարանում: Ընթերցողները նախընտրում են ընթերցանության թղթային տարբերակը, չնայած էլեկտրոնային ռեսուրսները ևս օգտագործվում են, ընթերցավարի սպասարկման ձևը նշանակություն չունի, ընթերցասրահի արտաքին պայմանները նպաստավոր են: Պարզ դարձավ նաև, որ ընթերցասրահները անընդհատ համալրվում են նոր տեխնոլոգիաներով և նոր գրականությամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետության երկու խոշոր բուհերի գրադարաններն ունեն ժամանակակից բոլոր հնարավոր պայմանները, ֆինանսական հնարավորությունները՝ ընթերցողների սպասարկումը բարձր

մակարդակով կազմակերպելու համար: Ի տարբերություն Տնտեսագիտական համալսարանի գրադարանի՝ ՀՊՄՀ գիտական գրադարանը հիմնվել է ավելի վաղ: Սակայն այսօր այս երկու գրադարանները կանգնած են հավասարազոր հորիզոնականների վրա:

2015 թ. ՀՊՄՀ գրադարանի ֆոնդը կազմել է 185.992 միավոր, մինչդեռ ՀՊՄՀ գրադարանի ֆոնդը՝ 517.496 միավոր, ինչն անհամեմատ ավելի մեծ է: ՀՊՄՀ գրադարանը 2015 թ. սպասարկել է 8200 ընթերցողի, ինչը կազմել է 325.000 հաճախում, մինչդեռ ՀՊՄՀ գրադարանը սպասարկել է 21.313՝ գրանցելով 1.328.338 հաճախում: Երկու գրադարաններն էլ սպասարկում են ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին, ՀՊՄՀ գրադարանը սպասարկում է նաև ավագ դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին:

Երկու գրադարաններն էլ տեխնիկապես հագեցած են, համալրված համակարգիչներով: ՀՊՄՀ գրադարանն ունի սքանավորման սարքավորում, ինչը հնարավորություն է ընձեռում տեղում թվայնացնել գրքերը՝ ընթերցողի սպասարկումն ավելի արագ ու որակյալ կազմակերպելու համար:

Երկու գրադարաններն ունեն էլեկտրոնային կայքեր, ինչը հնարավորություն է տալիս ընթերցողին ստանալ ամփոփ և ամբողջական տեղեկատվություն երկու գրադարանի գործունեության, էլեկտրոնային պաշարների ու սպասարկման, կազմակերպվող միջոցառումների, նորությունների մասին:

Ընթերցասրահներն ունեն նպաստավոր բոլոր պայմանները՝ ընթերցանությունը ճիշտ և արագ կազմակերպելու համար: Ընթերցասրահներում, ինչպես նաև միջանցքներում առկա է առձեռն ֆոնդ, հիմնականում հանրագիտարաններ, բառարաններ, նոր ստացված գրականությունը:

Գրադարանի ֆոնդերի համալրման հիմանական աղբյուրը գնումներն են, նվիրատվությունները և բաժանորդագրությունը: Ֆոնդերում պահպանվող գրականության գերակշիռ մասը ուսումնական ձեռնարկներ են, դասագրքեր, գիտական աշխատություններ: ՀՊՄՀ գրադարանում հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Գրադարանները համալրվում են ժամանակակից թերթերով և ամսագրերով: ՀՊՄՀ գրադարանում առանձնացված է նաև ՄԱԿ-ի անկյունը, ուր գերակշռում է օտարալեզու գրականությունը: Երկու գրադարաններում էլ ընթացքի մեջ են էլեկտրոնային գրադարանի և էլեկտրոնային գրացուցակի համալրման

աշխատանքները, որոնք հնարավորություն կտան ոչ միայն պահպանել գրքային ֆոնդը, այլև լավացնել սպասարկման որակը:

MAYA GRIGORYAN

SUMMARY

In our days, unfourtunetly, serious studies are not conducted in the library system. Each library tryes to solve its problem on its own, based on its budget and staff. In this respect, more favorable conditions are especially university libraries funded by the university system. University libraries carry out the digitization of library resources and are major trends for higher level service.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՐԵՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌ ՏՊԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԱՆՁԱՐԱՆ**

Բանալի բառեր՝ Սուրբ Գիրք, Աստվածաշունչ, Ոսկան Երևանցի, տպագրություն, մատենագիտություն, հայատառ թուրքերեն

Keywords. Holy Bible, Voskan Yerevantsi, typography, bibliography, Turkish with Armenian letters

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՐԵՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՌ ՏՊԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԱՆՁԱՐԱՆ¹**

Աստվածաշունչի առաջին տպագրությունը, որ տեղի ունեցավ 1452 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում, իրապես շրջադարձային իրադարձություն էր: Մինչ այդ, Սուրբ Գիրքն ընթերցողին հասանելի էր միայն ձեռագիր ընդօրինակությունների շնորհիվ, որոնք էլ ձեռք էին բերվում մեծ դժվարությունների գնով: Աստվածաշունչի տպագրությունը, կարելի է ասել, հեղաշրջում առաջացրեց քրիստոնեական աշխարհում՝ Աստծու Խոսքը միանգամայն հասանելի դարձնելով մարդկությանը: Հայ ժողովրդի մի ստվար հատվածը, սակայն, շարունակում էր անհաղորդ մնալ Աստվածաշունչի բովանդակությանը՝ սեփական լեզվով տպագիր Աստվածաշունչ չունենալու պատճառով: Եվ ահա 1666 թ. Հոլանդիայի Ամստերդամ մայրաքաղաքում Ոսկան վարդապետ Երևանցին առաջին անգամ տպագրում է Աստվածաշունչ մատյանը՝ ոսկեղենիկ գրաբար հայերեն թարգմանությամբ: Այսպիսով, հիմք դրվեց հայերեն տպագիր Աստվածաշունչի հրատարակություններին, որոնք իրենց ուրույն տեղն զբաղեցրին համաշխարհային գրականության շարքում:

Ավելի քան մեկ դար անց՝ 1853 թ., ներկայիս Թուրքիայի Իզմիր կամ պատմական Ջմյուռնիա քաղաքում առաջին անգամ տպագրվում է աշխարհաբար հայերենի փոխադրված Աստվածաշունչը: Սրանից մոտ 3 տասնամյակ առաջ՝ 1825 թ., Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Հովհաննես վրդ. Ջոհրապյանի կողմից առաջին անգամ Փարիզում լույս ընծայվեց Նոր Կտակարանը՝ աշխարհաբար հայերենով և զուգադիր գրաբար թարգմանությամբ, իսկ 1828 թ.՝

¹ Սույն հոդվածը գեկույցի տեսքով նախապես ներկայացվել է 2016 թ. հոկտեմբերի 18-ին Երևանում կայացած Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի երկրորդ նիստի ժամանակ:

միայն աշխարհաբար հայերենով: Արդեն 1842 թ. նույն Չմյուռնիա քաղաքում առաջին անգամ Հին Կտակարանի առանձին գրքեր տպագրվում են հայատառ թուրքերենով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արևմտահայաստանում շատ հայեր, հատկապես գավառաբնակները, մեծ մասամբ թրքախոս են և դժվարությամբ են հասկանում հայերեն տեքստերը, թեև կարողանում են կարդալ հայերեն տառերը: Հայատառ թուրքերենը նաև պաշտպանողական նշանակություն ուներ, քանի որ թուրքերի տեսադաշտից նրբորեն քողարկում էր գրքի բովանդակությունը: Ամբողջական Աստվածաշունչն առաջին անգամ հայատառ թուրքերենով է հրատարակվում 1859 թ.:

Անդրադառնալով Հայաստանի ազգային գրադարանում պահվող հայերեն և հայատառ Աստվածաշունչ գրքերին՝ պետք է նշել, որ մայր գրադարանում առկա են ընդհանուր առմամբ 97 անուն հայերեն և հայատառ Աստվածաշունչ՝ որից 74 անուն Աստվածաշունչը՝ հայերեն, իսկ 23 անուն Աստվածաշունչը՝ հայատառ թուրքերեն՝ այդ թվում նաև բողոքական հրատարակությունները: Այստեղ զանց ենք առել Աստվածաշնչի առանձին գրքերի, Աստվածաշնչի պարականոն գրքերի, մանկական Աստվածաշնչի, աստվածաշնչական համառոտապատումների և դրանց վերաշարադրանքի հրատարակությունները...

Հայաստանի ազգային գրադարանից բացակայում են ընդհանուր առմամբ 32 անուն Աստվածաշունչ, որից 29 անուն Աստվածաշունչը՝ հայերեն, իսկ 3 անուն Աստվածաշունչը՝ հայատառ թուրքերեն: Աստվածաշնչի այս վերջին հրատարակություններից օրինակներ կան Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանի գրադարանում, Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանում, Էջմիածնի մատենադարանում, Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, Երևանի Խնկո Ապրի անվան մանկական ազգային գրադարանում, Արագածոտնի մարզային գրադարանում, Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունում, Սիդնեյի հանրային գրադարանում:

Հատկանշական է արձանագրել, որ Հայաստանի ազգային գրադարանը բոլորովին վերջերս ձեռք է բերել 1908, 1925 և 1949 թթ. տպագրության 3 անուն հայերեն Աստվածաշունչ գրքեր, որոնք ոչ միայն Հայաստանի որևէ այլ գրադարանում առկա չեն, այլև դրանք հիշատակված չեն անգամ մատենագիտական ցուցակներում: Հայաստանի գրադարաններին անձանոթ են ևս 5 անուն հայերեն և հայատառ Աստվածաշունչ գրքեր, որոնց մասին հիշատակություններ կան Կահիրեում գործող Պիմեն Չարդարյանի գրատան ընդարձակ գրացանկում, Հ. Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ

կյանքի» երկհատորյակում, Անդրանիկ Տազեսյանի և Արմեն Յուրենշյանի աշխատասիրած «Լիբանանահայ գիրքը 1894-2012» մատենագիտական ցանկում և Փարիզի հայկական Նուպարյան գրադարանի նախկին վարիչ Ա. Գարտաշյանի կազմած գրացուցակում²: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հայ գրքի մատենագիտական հատորյակներից դուրս են մնացել 1861, 1878 թթ. Հայաստառ թուրքերեն և 1870, 1908, 1909 թթ. հայերեն Աստվածաշունչ գրքերը:

Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնում պատրաստվել է հայերեն և հայատառ տպագիր Աստվածաշնչի մատենագիտական ամբողջական ցուցակը, որը կազմել են ըստ հետևյալ մատենագիտական աղբյուրների՝

ա. «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» /Կազմողներ՝ Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան

բ. «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» /Կազմող՝ Հ. Դավթյան

գ. «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» /Կազմողներ՝ Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան

դ. «Հայ գիրքը 1901-1920 թվականներին» /Կազմողներ՝ Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ս. Թադևոսյան, Մ. Սողոմոնյան

ե. «Հայ գիրքը 1921-1930 թվականներին» /Կազմողներ՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան

զ. «Հայաստառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը 1727-1968 թթ.» /Կազմող՝ Հ. Ստեփանյան

է. Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ, որի մեջ ներառված չեն Երևանի և Էջմիածնի մատենադարանները

ը. Հայ գրքի էլեկտրոնային շտեմարան

թ. Հայաստանի ազգային գրադարանի ծառայողական քարտարաններ:

Ավելացնենք, որ Հայաստանի ազգային գրադարանը՝ որպես հայ գրքի բացառիկ շտեմարան, իր հոգևոր գանձարանից բազմաթիվ գրքեր է թվայնացրել՝ այդ թվում և Աստվածաշունչ գրքերը, որոնք տեղադրված են գրադարանի կայքէջում (<https://goo.gl/cjWKwU>) և ազատորեն հասանելի են ընթերցողներին: Արդեն իսկ ավարտված է հնատիպ շրջանի գրականության թվայնացումը, ինչը եզակի հնարավորություն է ընձեռում ընթերցասեր հանրությանը՝ տանը և ամենուր համակարգիչներում առցանց կարդալու հայ հոգևոր գրականության մի ստվար հատվածը:

² Տե՛ս Հասմիկ Ստեփանյան, «Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությունը 1727-1968 թթ.», Ստամբուլ, 2005, էջ 11:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Մատենագիտական ցանկ

հայերեն և հայատառ թուրքերեն հրատարակությունների

Մաս 1. Առկա են ՀԱԳ-ում

1666-1668

1. Աստուածաշունչ.- Ամստերդամ: Տպագր. Ոսկան Երևանցու, տպ. Ս. էջ-միածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի, 1666-1668.- 8 չի., 628 (ՌԷԸ), 834 (ՊԼԴ) երկայուն էջ, շարվ. 21X14,7 սմ:

Ոսկանյան Աստվածաշունչը նույն թվականին ունեցել է մեկ այլ տպագրություն ևս, որն էականորեն տարբերվում է նախորդից: Այս մասին ուսումնասիրությունները դեռ չարունակվում են, որոնք լույս կտեսնեն առանձին հոդվածով:

1705-1707

2. Աստուածաշունչ.- Կ. Պոլիս: Տպագր. Պետրոս Լատինացու, 1705-1707.- 511, 647 երկայուն էջ, շարվ. 16,8X11 սմ:

1733

3. Աստուածաշունչ: Հրատ. Մխիթար Սեբաստացու.- Վենետիկ: Տպագր. Անտոնի Բորտոլիի, 1733.- 10 չի., 1280 երկայուն էջ, շարվ. 24,2X14,2 սմ:

1805

4. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանաց /Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի.- Վենետիկ: [Տպ.] Ս. Ղազար, 1805.- 12, 2, 836, 30 էջ, շարվ. 17,2X22,7 սմ:

Հ. Հովհաննես վարդապետ Զօհրապյանը 1805 թ. Վենետիկում այս Աստվածաշունչը հրատարակել է նաև 4 առանձին հատորներով, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է Աստվածաշնչի գրքերի մի մասը՝ «հատոր առաջին յորում բովանդակին ութ գիրք, սկսեալ ի Ծննդոց մինչև ցՀռութ», «հատոր երկրորդ յորում բովանդակին հնգետասան գիրք, սկսեալ յԱ Թագաւորութեանց մինչև ցԳ Մակաբայեցիս», «հատոր երրորդ յորում բովանդակին քսանհորք գիրք, սկսեալ ի Սաղմոսաց մինչև ցԵզեկիէլ», «հատոր չորրորդ յորում բովանդակին Նոր Կտակարան»:

1817

5. Աստուածաշունչ: Գիրք Հնոց եւ Նորոց կտակարանաց.- Կալկաթա: Տպագր. «Ի գիւղաքաղաքն Սիրամփուր», 1817.- 6 չի., 5, 1307 էջ, շարվ. 17,3X22,5 սմ:

6. Աստուածաշունչ: Գիրք Հնոց եւ Նորոց կտակարանաց.- Ս. Պետերբուրգ: Տպագր. Յովսէփ Յովհաննիսեանի, 1817.- 6 չի., 1126 էջ, շարվ. 18,5X24 սմ:

1853

7. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց.- Զմիւռնիա: Տպագր. Գուլիելմոս Գրիֆֆիթի, 1853.- 1176 էջ, շարվ. 24X15 սմ:

1857

8. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յովհաննէս Միւհեն-տիսեանի, 1857.- 1406 էջ, շարվ. 16X9 սմ:

1859

9. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նիւ-Եորք: Տպագր. Աստուածաշունչի ընկերութեան, 1859.- 4 չի., 1010, 315 երկայուն էջ, շարվ. 14,5X9 սմ:

1860

10. Գիրք աստուածաշունչք Հին եւ Նոր կտակարանաց: Ըստ միաբան վաղեմի գրչագր. մերոց և յոյն բնագրաց: Հրատ. Ա. Բագրատունի.- Վենետիկ: Տպ. Ս. Ղազար, 1860 (ՌՅԹ).- 1224 էջ, 28 ն. թ. նկ., շարվ. 20X13 սմ:

1861

11. Քիթապը Շերիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]: Թարգմանություն եբրայերեն և հունարեն բնագրերից հայերեն, ապա հայերենից հայատառ թուրքերեն /Թարգմ.՝ Վիլյամ Գուդելի.- Կ. Պոլիս: Տպագր. Սուրբ Գրքի Ամերիկեան ընկերութեան, 1861.- 1041 երկայուն էջ:

Հայատառ թուրքերեն:

12. Քիթապը Շերիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]: Ասըլ իպրանի վէ եունանիճէտէն աչըզ թիւրքճէյէ թէրճիւմէ օլունուպ.- Կ. Պոլիս (Ստամպուլտ): Ա. Պ. Չըրչըլըն պասմախսանէսինտէ թապ օլունտու=[Տպագր. Ա. Պ. Չըրչիլի], 1861.- 1041 երկայուն էջ, շարվ. 25X15 սմ:

Հայատառ թուրքերեն:

1863

13. Քիթապը մուգատտէս Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ ճէտիտ=[Աստուածաշունչ]: Թարգմանություն հունարենից երրորդ անգամ.- Կ. Պոլիս: Տպագր. Յարութիւն Մինասեանի, 1863.- 1040 էջ, շարվ. 22X15 սմ:

Հայատառ թուրքերեն:

1867

14. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբր. եւ յուն. թարգմ.- Նիւ-Եորք: Տպագր. Աստուածաշունչի ընկերութեան, 1867.- 880, 274 - գծափակ էջ, շարվ. 20X12 սմ:

1870

15. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նոր Եորք: [Տպագր.] Աստուածաշունչի ընկերութեան, 1870.- 1153 էջ:

1873

16. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագր. թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1873.- 1169 էջ, շարվ. 25X18 սմ:

1877

17. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1877.- 880 գծափակ էջ, շարվ. 19X9 սմ:

1878

18. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1878.- 898 էջ, շարվ. 24X17 սմ:

19. Ահտ ըլ Աթիգ վէ Ահտ ըլ Ճէտիտ=[Հին կտակարան եւ Նոր կտակարան].- İstanbul=[Ստամբուլ].- 852, 251 էջ:

Հայատառ թուրքերեն:

1880

20. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1880.- 880 էջ, շարվ. 19X13 սմ:

21. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վէ 'ահտը Ճէտիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1880.- 936, 296 էջ, շարվ. 24X16,5 սմ:

Հայատառ թուրքերեն:

1883

22. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1883.- 1171 երկայուն էջ, շարվ. 24X17սմ:

23. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանաց: Թարգմ. եբրայական և յունական բնագրից.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1883.- 1008 էջ, շարվ. 16X9 սմ:

24. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վէ 'ահտը Ճէտիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1883.- 1114, 324 էջ:

Հայատառ թուրքերեն:

1884

25. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1884.- 879, 1 չի. գծափակ էջ, շարվ. 19,5X13 սմ:

26. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1884.- 1087 գծափակ, երկայուն էջ, շարվ. 12X8 սմ:

27. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1884.- 927, 292 էջ:

Հայատառ թուրքերեն:

1888

28. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1888.- 1385 էջ:

Հայատառ թուրքերեն:

1889

29. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1889.- 895 երկայուն էջ, շարվ. 24X17 սմ:

30. Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմ.: (Աշխարհաբար).- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1889.- 1170 էջ, շարվ. 24X17 սմ:

1890

31. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1890.- 879 էջ, շարվ. 20X13 սմ:

1892

32. Աստուածաշունչ: Մատեան Հին և Նոր կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց լոյս ընծայեալ համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց.- Կ. Պոլիս: Տպագր. Գարեգին Պաղտատլեանի, 1892.- Բ, 256° էջ, շարվ. 17X13 սմ:

33. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստվածաշունչ]: Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը 'իպրանի վէ քիլտանի վէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպուլտա=[Կ. Պոլիս]: Տպագր. Ա. Յ. Պոյաճեան Մաթպա'ասընտա թապ' օլունմըշ տըր, 1892.- 927, 292 երկայուն էջ:

Հայատառ թուրքերեն:

1895

34. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանաց: Համեմատութեամբ եբրայական և յունական բնագր.- Կ. Պոլիս: Տպագր. Գարեգին Պաղտատլեանի, 1895.- Ը, 1 չհ., 986, 280, 4 չհ. էջ, շարվ. 19X13 սմ:

1896

35. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական և յունական բնագրէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1896.- 1424 էջ, շարվ. 20X12 սմ:

36. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1896.- 1254 էջ:

Հայատառ թուրքերեն:

1898

37. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1898.- 1169 էջ, շարվ. 23X17 սմ:

1899

38. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիր. թարգմ.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1899.- 880 էջ, շարվ. 19X12 սմ:

1900

39. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1900.- 1396 էջ:

Հայատառ թուրքերեն:

1902

40. Աստվածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1902.- 1010 երկսույն էջ:

1903

41. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1903.- 1 չի., 1066 գծափակ, երկսույն էջ, շարվ. 13X8,5 սմ:

1905

42. Աստուածաշունչ: Հին եւ Նոր կտակարան: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1905.- 1169, 1 չի. երկսույն էջ, շարվ. 25X17 սմ:

43. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1905.- 1056, 308, 13 էջ:

Հայատառ թուրքերեն:

1906

44. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1906.- 1 չի., 1347 երկսույն էջ, շարվ. 16X11 սմ:

45. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ]: 'Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը 'իպրանի վե քիլտանի վե եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ=[Թարգմանություն հունարեն եւ եբրայերեն բնագրերից].- Իսթանպուլտա=[Կ. Պոլիս]: Տպագր. Ա. Յ. Պոյաճեան մաթալա'ասընտա թապ' օլունմըշ տըր, 1906.- 1025, 13 երկսույն էջ:

Հայատառ թուրքերեն:

1906-1907

46. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1906.- 1150 երկայուն էջ, շարվ. 25X17 սմ:

1908

47. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1908.- 988, 278 երկայուն էջ, շարվ. 16,5X10,5 սմ:

48. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1908.- 926, 292, 9 էջ:

Հայատառ թուրքերեն:

1909

49. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1909.- 1046 էջ:

1910

50. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1910.- 1 չի., 867, 1 չի. երկայուն էջ, շարվ. 20X13,5 սմ:

51. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1910.- 1056, 13, 308 էջ:

Հայատառ թուրքերեն:

1911

52. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1911.- 2 չի., 1046 երկայուն էջ, շարվ. 13X8,5 սմ:

1913

53. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1913.- 2 չի., 1046 երկայուն էջ, շարվ. 13X9 սմ:

54. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ]: Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը իպրանի վէ քիւտանիվէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպուլտա=[Կ. Պոլիս]: Տպագր. Պոյաճեան Մաթպասընտա թապ օլունմըշ տըր, 1913.- 927 էջ:

Հայատառ թուրքերեն:

1914

55. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1914.- 1 չի., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10,5 սմ:

1915

56. Քիթապը մուգատտէս եանի 'ահտը 'աթիզ վէ 'ահտը ճէտիտ=[Գիրք Հին եւ Նոր կտակարանաց]: Ան ասըլ մուհարրէր պուլունտըղը 'իպրանի վէ քիւտանի վէ եունանի լիսանլարընտան պիթ թէրճէմէ.- Իսթանպօլտա=[Կ. Պոլիս]: Յակոբ Մատթէոսեան Մաթպա Ասընտա թապ Օլունմըշ տըր, 1915.- 875, 273, 10 երկայուն էջ:

Հայատառ թուրքերեն:

57. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիզ վէ 'ահտը ճէտիտ=[Գիրք Հին եւ Նոր կտակարանաց].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1915.- 1056, 13, 306 էջ:

Հայատառ թուրքերեն:

1917

58. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նիւ-Եորք: Տպագր. Աստուածաշունչի ընկերութեան, 1917.- 879, 1 չի. գծափակ, երկայուն էջ, շարվ. 23X16սմ:

1920

59. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1920.- 1 չի., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10 սմ:

1921

60. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1921.- 1 չի., 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10սմ:

61. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1921.- 1046, 302 երկայուն էջ, շարվ. 13,5X8,7 սմ:

1922

62. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1922.- 1046, 302 երկայուն էջ, շարվ. 13X9 սմ:

63. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1922.- 1 չի., 1347 երկայուն էջ, շարվ. 15,5X9 սմ:

1923

64. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Մատթէոսեանի, 1923.- 988 երկայուն էջ, շարվ. 16,5X10 սմ:

1925

65. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ (Սուրիա): Տպագր. Ամերիկեան տպարանի, 1925.- 2 չի., 1046, 302 երկայուն էջ, շարվ. 13,4X9 սմ:

1926

66. Ահտ ըլ աթիգ վէ ահտ ըլ ճէտիտ=[Հին կտակարան եւ Նոր կտակարան].- Պէյրութ: Տպագր. Ամերիկեան մաթաւասը, 1926.- 1056, 13, 308 էջ:

Հայատառ թուրքերէն:

67. Քիթապը Սուգատտէս=[Աստուածաշունչ].- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1926.- 1056, 13, 308 էջ:

Հայատառ թուրքերէն:

1927

68. Քիթապը Սուգատտէս=[Աստուածաշունչ].- Պէյրութ: Տպագր. Ամերիկեան Քիթապը Սուգատէս Շիրքէթի=[Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան], 1927.- 1056, 1, 308 էջ:

Հայատառ թուրքերէն:

1928

69. Քիթապը Սուգատտէս=[Աստուածաշունչ].- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1928.- 927, 295, 9 էջ:

Հայատառ թուրքերէն:

1929

70. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1929.- 1 չի., 1046 երկայուն էջ, շարվ. 13,5X8 սմ:

71. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանաց: Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց: Համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց.- Վիեննա: Տպ. Ամերիկեան ընկերութեան Սուրբ գրոց, 1929.- Ը, 991, 1 չի. երկայուն էջ, շարվ. 20X13 սմ:

1930

72. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1930.- 1 չի., 867, 1 չի. երկայուն էջ, շարվ. 19,5X13,5 սմ:

73. Քիթապը Սուգատտէս=[Աստուածաշունչ].- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1930.- 1025, 298, 13 էջ:

Հայատառ թուրքերեն:

1932

74. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1932.- 1046 էջ, շարվ. 13,5X8,7 սմ:

1942

75. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1942.- 1046, 302 էջ:

1947

76. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններու, 1947.- 1046, 302 էջ:

1949

77. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններու, 1949, 1046, 302 երկայուն էջ, շարվ. 13,5X9 սմ:

1953

78. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Սուրբ Գրքի միացեալ ընկերութիւններու, [1953].- 988, 279 էջ, 4 չի. ծալ. թ. գունավոր քարտեզներ:

1955

79. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Բնագիր լեզուներէ թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններու, 1955.- 1046, 302 էջ, 4 չի. ծալ. թ. գունավոր քարտեզներ:

1957

80. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Վիեննա: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1957.- 867, 276 էջ, 3 ներդիր գունավոր քարտեզներ:

1960

81. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Լոնտոն, 1960.- 1424 էջ:

1963

82. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններու, 1963.- 988, 279 էջ:

1966

83. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններու, 1966.- 850, 4 չի., 257 էջ:

1970

84. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Մերձաւոր Արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւններու, 1970.- 988, 279, 4 չի. էջ:

1981

85. Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր Կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Դալլաս: Տպագր. Աստուածաշունչի Ամերիկեան ընկերութեան, 1981.- 279 էջ, 3 ներդ. թ. գունավոր քարտեզ:

1985

86. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններու, 1985.- 1570 էջ:

1994

87. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմանութիւն.- Ս. Էջմիածին: Տպագր. Հայաստանի Աստուածաշունչային ընկերութեան, 1994.- 1346, 352 էջ:

1996

88. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէ թարգմանուած.- Paramus: Տպագր. Armenian Missionary Association of America, 1996.- 1218, 346 երկայուն էջ, շարվ. 22,5X14,5 սմ:

1997

89. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանաց.- էջմիածին: Տպագր. Հայաստանի Աստուածաշունչային ընկերութեան, 1997.- Ը, 1165, 1 չի., 280 երկայուն էջ, շարվ. 20X13 սմ:

Գիրքը 1929 թվականի հրատարակության վերահրատարակությունն է: Առկա է նաև վերը նշված հրատարակության տիտղոսաթերթը:

1998

90. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- [Էջմիածին]: Տպագր. Հայաստանի Աստուածաշունչային ընկերութեան, 1998.- 1424 էջ:

2010

91. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Երևան: Տպագր. Հայաստանի Աստուածաշունչային ընկերութեան, 2010.- 1423 էջ:

92. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագրերից թարգմանուած: «Բիբլիական միավորում».- Երևան: Տպագր. «Դաւիթ թագաւոր»-ի, 2010.- 1426 էջ:

93. Աստուածաշունչ.- Նիւ-Եորք: Տպագր. «Նոր աշխարհ»-ի, 2010.- 2048 երկայուն էջ:

2012

94. Աստուածաշունչ: Հին եւ Նոր կտակարան.- London: Տպագր. Trinitarian Bible Society, 2012.- 1315 էջ:

2013

95. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմ.: Վերահրատ.- Ս. Էջմիածին: Տպագր. Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, 2013.- 1346, 352 երկայուն էջ:

2014

96. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմանութիւն.- Ս. Էջմիածին: Տպագր. Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան , 2014.- 1346, 352 էջ:

2015

97. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմ.: Վերահրատ.- Ս. Էջմիածին: Տպագր. Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, 2015.- 1697 էջ:

Մաս 2. Առկա են այլ հավաքածուներում

1650

1. *Աստուածաշունչ: (Անավարտ տպագրութ.)- Նոր Զուղա: Տպագր. Հովհաննես Զուղայեցու, տպ. Ամենափրկիչ վանքի, 1650 (°):

Այս անավարտ տպագրության մասին առաջին անգամ հիշատակել է Խաչատուր Նորջուղայեցին «Պատմութիւն պարսից» ուսումնասիրության մեջ (էջ 121). «Ուր և անդ բազում գրեանց՝ որք տպեցին, սկսան ընդ որոց և տպել զԱստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչև ցայսօր ի միջի մերում. Սա կարին լաւագոյն ունելով զթուղթն ու զգիրնքան զառաջին տպեալ գրեանսն» (տե՛ս նաև «Ազդարար», 1795, էջ 233):

Գրքի մասին հիշատակել են նաև Ա. Երիցյանը, Թեոդիկը, Գ. Գալեմքարյանը և ուրիշներ: Թեոդիկը գրքի անավարտ տպագրության թվականը համարում է 1650-ը:

1859

2. Սիտը Աթիգ վէ Սիտը Ճէտիտ=[Հին կտակարան եւ Նոր կտակարան]:

Հայատառ թուրքերեն:

Պ. Զ.

1862

3. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Նիւ-Եորք: Տպագր. Աստուածաշունչի ընկերութեան, 1862.- 679, 1 չի. գծափակ էջ, շարվ. 20X13 սմ:

ՄՄ

4. Քիթապը Շէրիֆ Եանի ահտըլ աթիգ վէ ահտըլ Ճէտիտ=[Աստուածաշունչ]: Թարգմանությունը՝ եբրայերեն և հունարեն բնագրերից հայերեն, ապա հայերենից՝ հայատառ թուրքերեն /Թարգմ.-ը՝ Վիլյամ Գուդելի.- Կ. Պոլիս: Տպագր. Սուրբ Գրքի Ամերիկեան ընկերութեան, 1862.- 1200 երկայուն էջ:

Հայատառ թուրքերեն:

ՄՄ: ԳԱԱ: ՍՀԳ

1875

5. *Աստուածաշունչ: Գիրք Հին և Նոր կտակարանաց: Եբրայական և յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1875.- 1010, 315 էջ:

Ղ հտ. 1, 217

1881

6. *Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1881.- 1010, 315 էջ:

Ղ հտ. 1, 217

1884

7. *Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1884.- 1169 էջ:

Ղ հտ. 1, 217

1888

8. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագրէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1888.- 1010 էջ, շարվ. 15X10 սմ:

ԳԱԱ

1893

9. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1893.- 877, 880, 275 սյունակագիր էջ:

ԵՊՀ

1898

10. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1898.- 1169 էջ, շարվ. 23X17 սմ:

ԳԱԱ: ՄՄ

1902

11. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1902.- 1 չհ., 1010 երկսույն էջ, շարվ. 16X10 սմ:

ԳԱԹ: ԵՊՀ

1905

12. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1905.- 879, 5 չհ. գծափակ, երկսյուն էջ, շարվ. 18X12,5 սմ:

ՄՄ

1911

13. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1911.- 1107 երկսյուն էջ, շարվ. 24X18 սմ:

ԵՊՀ

1912

14. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Կ. Պոլիս: Տպագր. Յակոբ Պոյաճեանի, 1912.- 1 չհ., 864, 276 երկսյուն էջ, շարվ. 20X13 սմ:

ԷՍ

15. Քիթապը մուգատտէս եա'նի 'ահտը 'աթիգ վե 'ահտը ճետիտ=[Աստուածաշունչ].- Կ. Պոլիս: Տպագր. Պոյաճեանի, 1912.- 1056, 13, 308 էջ:

Հայատառ թուրքերեն:

ՓՆԳ

1958

16. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ, 1958.- 1046, 302 էջ:

ԳԱԱ

1959

17. Աստվածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Լոնտոն, 1959.- 1424 էջ:

ԳԱԱ

1981

18. *Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Պէյրութ: Տպագր. Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններու, 1981.- 1218, 346, 6 չի. էջ, քարտեզներ:

ԼԳ, 2013, 49

1989

19. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարանաց: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Stuttgart, 1989.- 1424 էջ:

ԵՊՀ: ԳԱԱ

20. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Թեհրան: Տպագր. Iranian Bible Society, [1989].- 1424 երկայուն էջ, շարվ. 18,3X12,5 սմ:

ԳԱԱ: ԱՄԳ: ԽՄԳ

21. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Հայ Աւետարանչական ընկերակցութեան և Միջազգային Սուրբ Գրոց Միութեան, 1989.- 1424 էջ:

ԻԿԳ

1994

22. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած.- Մոսկվա: Տպագր. «Zeus» «Major» LTD, 1994.- 1218, 5 չի., 346 երկայուն էջ, քարտեզ:

ԽՄԳ

1996

23. Աստուածաշունչ: Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու: Եբրայական եւ յունական բնագիրներէ թարգմանուած.- Paramus: Տպագր. Armenian Missionary

Association of America, [1996].- 1218, 4 չհ., 346 երկայուն էջ, քարտեզ, շարվ. 17,5X11,5 սմ:

ԽՄԳ

2001

24. *Աստվածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2001.- 1697 էջ:

ՀԱԸ

2003

25. *Աստվածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2003.- 1697 էջ:

ՀԱԸ

26. *Աստվածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2003.- 1424 էջ:

ՀԱԸ

27. *Աստուածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Լիբանանի Աստուածաշնչային ընկերութեան, 2003.- 1564 էջ:

ՀԱԸ

2004

28. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագրերից թարգմանուած.- Minsk: Տպագր. «Աստուածաշնչային լիգա»-ի, 2004.- 1424 էջ:

ԱՄԳ

29. *Աստվածաշունչ.- Երևան: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2004.- 1697 էջ

ՀԱԸ

30. *Աստուածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Լիբանանի Աստուածաշնչային ընկերութեան, 2004.- 1691 էջ:

ՀԱԸ

2005

31. *Աստվածաշունչ.- Առանց տպագրութ. վայրի հիշատակութ.: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2005.- 1424 էջ:

ՀԱԸ

2007

32. *Աստվածաշունչ.- Երևան: Տպագր. Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության, 2007.- 1423 էջ:

ՀԱԸ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԳ – Արագածոտնի մարզային գրադարան

ԳԱԱ – ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարան

ԳԱԹ – Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարան

ԵՊՀ – Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարան

ԷՄ – Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան

ԻԿԳ – Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան

ԼԳ – «Լիբանանահայ գիրքը 1894-2012 մատենագիտական ցանկ», Պէյրուս, 2013

ԽՄԳ – Խնկո Ապոր անվան մանկական ազգային գրադարան

ՀԱԸ – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության պաշտոնական կայքէջ

Ղ – Հ. Արսէն Ղազիկեան, «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի», հտ. 1-2, Վենետիկ

ՄՄ – Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան)

Պ. Զ. – Ընդարձակ գրացանկ Պիմէն Զարդարեան գրատան, Կահիրէ

ՍՀԳ – Սիդնեյի հանրային գրադարան

ՓՆԳ. – Փարիզի հայկական Նուպարեան գրադարանի վարիչ Ա. Գարտաշեանի կազմած գրացուցակ, Փարիզ, ա. թ.³

Ծանոթ. Վերոբերյալ ցանկերում աստղանիշով (*) նշված են այն գրքերը, որոնք մատենագետը չի տեսել և գրքի նկարագրությունը վերցրել է մատենագիտական որևէ ցուցակից կամ այլ աղբյուրից:

³ Տե՛ս տողատակի թիվ ² տարընթերցումը (էջ 18):

SUMMARY

In 2016-2018 it is the 350th anniversary of the first printed Armenian Bible. It was published in 1666-1668 in Amsterdam with the efforts of Archimandrite Voskan Yerevantsi (1614-1674) with illustrations and decorations. The Bible by Voskan Yerevantsi is considered one of the finest examples of the old Armenian printing.

In this article you can find the complete bibliography of the Armenian Bible, as well as the Turkish Bible in Armenian letters, printed in Armenia and abroad, since 1666. The bibliographical list also includes the Bibles we have in the National library of Armenia and the ones we don't have in the mentioned library but we can find them in the other Armenian libraries and catalogs.

ՀԱՅ ԳՐՔԻ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՏՊԱԳԻՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Բանալի բառեր՝ հայ գիրք, հանրահռչակում, տպագիր մշակութային ժառանգություն

Keywords. Armenian Book, Popularization, Printed-Cultural Heritage

Արդի շրջանում հայ գրքի նորովի ուսումնասիրման, վերաբնորոքման և հանրահռչակման հրատապությունը պայմանավորված է հոգևոր-մշակութային և պատմական իրողություններով: Առհասարակ հայոց տպագիր մշակութային ժառանգության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի հնատիպ գրականությունը, որը ներառում է 1512-1800 թվականները: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի պետական գրադարանի Հազվագյուտ և արժեքավոր հրատա-րակությունների հավաքածուի մեջ պահպանվում են նաև 15-րդ դարի տպագիր նյութեր¹: Ֆրանսիայի ազգային գրադարանի Ֆրանսուա Միտերանի անվան ընթերցասրահում պահպանվում է 1455 թ. տպագրված Աստվածաշունչ²:

Հայերեն հնատիպ գրականությունն ունի պատմական-մշակութային հույժ կարևոր արժեք՝ հանդիսանալով հայոց ազգային ինքնության մի յուրօրինակ վկայագիր:

Հայ հնատիպ գիրքը լինելով մեր ժողովրդի մշակութային անանց արժեքներից մեկը, ամենայն իրավամբ պետք է դիտել նաև համամարդկային մեծագույն արժեք: Հայ հնատիպ գրականությունը ստեղծվել է ոչ միայն հայերիս, այլև այլ ազգերի համատեղ ջանքերով³:

Մարդկային հասարակական կյանքի «շարժիչը» գիրն է՝ իր ընդարձակ հասկացողությամբ: Գրով և գրքով հայտնված միտքն ու գաղափարը ոչ միայն ավելի հարատև են, այլև ծավալուն՝ ժամանակի և տարածության ընդգրկմամբ⁴:

¹ <http://www.rsl.ru/ru/s2/d1034/>

² http://www.bnf.fr/en/collections_and_services/liv_bib_eng/s.rare_books.html?first_Art=non

³ Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ: Գիտական հոդվածների ժողովածու.- Երևան: ԵՊՀ, 2015.- էջ 22:

⁴ Մուրադյան Ա.: Արխիվագիտություն.- Երևան, 2013, էջ 6:

Այժմ քննարկենք հայ գրքի հանրահռչակման տարբերակները:

1. Համացանցը: Այժմ հայերեն հնատիպ 1512-1800թթ. և հայերեն 1801-1850թթ. գրականությունը թվայնացված և զետեղված է Հայաստանի ազգային գր-րադարանի (ՀԱԳ) կայքի «Հայ գիրք» շտեմարանում առցանց մատչելիության սկզբունքով: Թվայնացմամբ լուծվում են երկու կարևոր հիմնահարցեր: Նախ՝ թվայնացումն ապահովում է տպագիր արտադրանքի և տեղեկատվության արխիվացում թվային ձևաչափով և երկրորդ՝ ՀԱԳ-ի կայքում տեղադրված «Հայ գիրք» և մյուս էլեկտրոնային շտեմարանները հնարավորություն են ընձեռում հայկական գրավոր մշակութային ժառանգությունը հավուր պատշաճի ներկայացնել հանրությանը. մշակութային բաղադրիչը դիտարկվում է ազգային անվտանգության համատեքստում: Ազգային անվտանգությունը կարելի է բաժանել մի շարք գլխավոր ոլորտների՝ ռազմավարական, տնտեսական (ֆինանսական, էներգետիկ և այլն), տեղեկատվական, սոցիալական, սոցիալ-հոգեբանական ու մշակութային⁵:

2. Հայ գրքի հանրահռչակումը կարևոր նշանակություն կարող է ունենալ հայագիտության զարգացման տեսանկյունից, իսկ հայագիտությունը, որպես գիտությունների համակարգ, ՀՀ, ԼՂՀ և հայկական սփյուռքի համար ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Եվ պատահական չէ, որ հայագիտության զարգացումը նախանշող փաստաթղթերից մեկում, ի թիվս այլ հարցերի, նշվում է նաև հետևյալը. ընդլայնել Հայաստանում և արտերկրում պահվող ձեռագրական հավաքածուների նկարագրությունը, գիտական բնագրերի կազմումն ու հրատարակումը, վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությունը, արխիվային նյութերի, հնատիպ գրքերի և մամուլի թվայնացումը, պատճենումը կամ ձեռքբե-րումը⁶:

Առհասարակ տպագիր մշակութային ժառանգությունը կարելի է դիտարկել որպես քաղաքակրթական արժեք:

Քաղաքակրթական մրցակցության պայմաններում հայագիտության զարգացման կիրառական խնդիրները, հատկապես հոգևոր-մշակութային իմաստով, դառնում են ազգային անվտանգության և դրա կարևոր բաղադրամասի՝ տեղեկատվական անվտանգության ապահովման նախապայման: Այս իրավիճակը պահանջում է հայագիտության կիրառական գործառույթների

⁵ Այվազյան Ա.: Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի.- Երևան, 2003, էջ 46:

⁶ Հավելված N 1, ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշման, հայեցակարգ հայագիտության զարգացման, Երևան:

հզորացում, այ-սինքն՝ պետք է հայագիտական ուսումնասիրությունների արդյունքներն ըստ ա-մենայնի օգտագործվեն ազգային ու միջազգային տեղեկատվական, քաղաքական և գաղափարախոսական հարթություններում և ծառայեն ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության շահերին: Ասվածից կարելի է եզրահանգել, որ տպագիր ժառանգությունը տեղեկատվական պատերազմների պարագայում կարելի է դի-տարկել որպես կարևոր փաստարկ⁷:

3. Կարևոր նշանակություն ունեն էլեկտրոնային և ավանդական գովազդի միջոցները: Գրադարանային գովազդը գրադարանի, գրադարանային ծառայությունների մասին տեղեկատվություն է՝ դրանց մասին օգտվողներին (քնակչությանը)՝ իրազեկելու և դրանց նկատմամբ պահանջարկի խթանման նպատակով⁸: Գովազդի ժամանակակից տարբերակներից կարելի է կիրառել նաև բջջային հեռախոսների միջոցով գովազդումը, օրինակ՝ գրադարանում կայանալիք որևէ մի-ջոցառման կամ նոր հրատարակության շնորհանդեսի մասին իրազեկել հան-րությանը համապատասխան հաղորդագրությունների միջոցով: Այս հարցում պետք է ծավալել համագործակցություն շարժական կապի ծառայություն մատու-ցող ընկերությունների հետ:

4. Գրադարանային տարաբնույթ միջոցառումների՝ նոր հրատարակությունների շնորհանդեսների, գրական ցերեկույթների, քննարկումների և մշակութային գործիչների հետ հանդիպումների կազմակերպումը և իրականացումը ևս նպաստում է հայ գրքի հանրահռչակմանը: Օրինակ՝ գրադարանավարի օրվա հետ կապված հրատարակվում են ծրագրեր, որոնցից մեկում նշված էր, որ ծրագ-րի նպատակն է ընդգծել գրքի, գիտելիքի, գրադարանների դերը, ընթերցանու-թյան կարևորությունն արդի տեխնոլոգիաների ժամանակաշրջանում⁹:

5. Հայ գրքի հանրահռչակման տեսանկյունից որոշակի դերակատարում ունի նաև ՀԱԳ-ի Գրատպության թանգարանը, որտեղ այցելուները կարող են տեսնել հայ գրատպության և տպագրական արվեստի զարգացման պատմական ուղին: Գրատպության թանգարանի հավաքածուն ընդգրկում է հայ գրատպու-թյան պատմությունը ներկայացնող ցուցանմուշներ՝ հնատիպ գրքեր, տպագրա-

⁷ Հավելված N 1, տե՛ս նույն տեղում:

⁸ Библиотековедение, библиографоведение и информатика, терминологический путеводитель, науч. ред. М. Г. Вохрышева, Москва, 2007, ст. 13.

⁹ Դարձիր գրադարանի բարեկամ, հոկտեմբերի 3-ին և 7-ին Հայաստանի Հանրապետության գրադարան-ներում նախատեսված «Հանդիպման վայրը՝ գրադարան» ծրագրի շրջանակներում նախատեսված մի-ջոցառումների ցանկ նվիրված գրադարանավարի օրվան, Երևան, 2015:

կան գործիքներ, կլիշեներ, տպագրական մեքենաներ և այլ գիտաօժանդակ նյութեր¹⁰:

6. ՀԱԳ-ին ներհատուկ են տարաբնույթ գործառույթներ՝ գիտակրթական, դաստիարակչական, մշակութային, տեղեկատվական-հաղորդակցական, լուսավորչական, տեխնոլոգիական, հետազոտական, վիճակագրական, սպասարկման և այլն: Հիշյալ գործառույթների իրականացումը ևս հայ գրքի հանրահռչակման համար ստեղծում է նպաստավոր պայմաններ:

7. Խնդրո առարկա հարցերի հետ կապված նշենք հանրապետական, տարածաշրջանային և միջազգային ցուցահանդեսների և ցուցադրությունների կազմակերպումը և իրականացումը: Նմանատիպ ցուցադրությունները և ցուցահանդեսները ևս հայ գրքի հանրահռչակման համար ունեն կարևոր նշանակություն: Օրինակ, Չեխիայի ազգային գրադարանում ս/թ հոկտեմբերի 11-25-ը «Քրիստոնյա Հայաստան» գրքի ցուցահանդեսում ցուցադրելու նպատակով ՀԱԳ-ի հավաքա-ծուներից առանձնացվել և ուղարկվել է հայ գրքի բովանդակային հարստությունը ներկայացնող 20 միավոր հայերեն և 5 միավոր չեխերենից թարգմանված գրա-կանություն: Ցուցադրության ներկայացված հայերեն հնատիպ 1512-1800թթ.գը-րականությունը բովանդակային առումով բազմազան էր և ներակացնում էր Վե-նետիկում, Ամստերդամում, Էջմիածնում և Կ.Պոլսում տպագրված գրականություն: Ներկայացված էին նաև 1801-1850թթ. Վենետիկում և Կ.Պոլսում հրատա-րակված հրատարակություններ: Հատկանշական է, որ որպես թարգմանական գրականություն ներառված էին նաև չեխ անվանի գրողների ստեղծագործություններից նմուշներ՝ հրատարակված Երևանում և Թիֆլիսում: Հիշյալ ցուցա-հանդեսը փաստում է հայ-չեխական միջգրադարանային համագործակցության և միջմշակութային երկխոսության ու փոխգործակցության իրողությունը:

8. Կարելի է հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում և ԲՈՒՀ-երի որոշ ֆակուլտետներում փորձնական ներառել հայոց տպագիր և ձեռագիր մշակութային ժառանգությունը ներկայացնող այնպիսի դասընթաց, որ աշակերտին կամ ուսանողին անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքներ կհաղորդի թվային գրադարանների, գրադարանային-տեղեկատվական գործի, թանգարանային և արխիվային գործի, մատենադարանների գործունեության և այլ հարակից հարցերի վերաբերյալ: Դասավանդման հետ կապված կարող ենք առաջարկել նաև, որպեսզի համապատասխան մասնագետներ տարվա մեջ

¹⁰ <http://www.nla.am>, Հայաստանի ազգային գրադարանի պաշտոնական կայք:

որոշակի պարբերականությամբ գործուղվեն հանրակրթական դպրոցներ և այլ գիտակրթական հաստատություններ:

Վերոշարադրյալ տարբերակների զուգահեռաբար կիրառման պարագայում հայ գրքի հանրահռչակման համար կարող են ստեղծվել առավել նպաստավոր պայմաններ:

MHER GHAZINYAN
THE POPULARIZATION OF ARMENIAN BOOK AS A METHOD FOR
PREZENTATION OF THE PRINTED HERITAGE
SUMMARY

Popularization of Armenian book is important task for presenting printed heritage. Several methods are introduced in the article. Impact on Armenian Studies is discussed.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԼԱՍԱՆ

*Հայաստանի ազգային գրադարան
Մատենագիտության և գրադարանագիտության բաժին*

ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բանալի բառեր՝ շուկայաբանական հետազոտություն, վիճակագրական վերլուծություն, մրցակցություն, ռազմավարական պլանավորում

Keywords. Marketing research, Statistical analysis, Rivalry, Strategic planning

Ցանկացած կազմակերպության հիմնախնդիրը մրցունակ լինելն է, իսկ մրցակցային առավելությունն այն է, որն ընկերությունը ստանում է թիրախային սպառողների կարիքները մրցակիցներից ավելի լավ բավարարող առաջարկների մշակման ճանապարհով: Ցանկացած կազմակերպության գործունեության հաջողությունը զգալի չափով պայմանավորված է ճիշտ մշակված ռազմավարությունից: Մարքեթինգային ռազմավարությունները պետք է հաշվի առնեն ոչ միայն հաճախորդների պահանջմունքները, այլև մրցակիցների ռազմավարությունները: Այս ուղղությամբ առաջին քայլը հանդիսանում է մրցակիցների վերլուծությունը: Մրցակիցների վերլուծությունը հիմնական մրցակիցների բացահայտման, ինչպես նաև դրանց նպատակների, ռազմավարությունների, ուժեղ ու թույլ կողմերի գնահատման գործընթացն է, որի ընթացքում նաև առանձնացվում են այն մրցակիցները, որոնց կարելի է գրոհել և որոնցից անհրաժեշտ է խուսափել: Հաջորդ քայլը մրցակցային ռազմավարության մշակումն է: ¹

Օրինակ՝ ըստ Ա. Թոմսոնի՝ մրցակցային ռազմավարությունը մեթոդների և նախաձեռնությունների ամբողջություն է՝ ուղղված հաճախորդների ներգրավմանը և նրանց պահանջմունքների բավարարմանը, մրցակիցներին դիմակայելուն և շուկայական դիրքի ամրացմանը: ²

Ռազմավարության իրականացման կարևոր նախապայմանը նորարարական մեթոդների ներդրումն է շուկայում մրցակիցներից շուտ: Դրա համար անհրաժեշտ է արդյունավետ նոր գործունեություն, նոր գաղափարներին հակված ընկերության ղեկավարություն, շուկայի լավ իմացություն, արդյունավետ մարքե-

¹ Մարքեթինգի հիմունքներ, Երևան, 2013, էջ 559:

² Նույն տեղում:

թինգ, ստեղծագործական խառնվածքով աշխատակիցներ, ռիսկի տեղաբաշխման հնարավորություն, ճկուն կազմակերպական կառուցվածք և եզակի ռեսուրսներ: Մրցակցությունը դրսևորվում է յուրաքանչյուր ընկերության գործունեության տարբեր ոլորտներում՝ ապրանքների թողարկման, տեխնոլոգիաների և նորամուծությունների կիրառման, տեխնիկական ռազմավարությունների, մարքեթինգի և նույնիսկ մշակույթի: Մրցակիցներից առաջ անցնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե որտեղ պետք է գործադրվեն առավելագույն ջանքեր: Հետևաբար ընկերության գործունեության արդյունավետության նպատակով հարկ է ակտիվացնել մարքեթինգային գործունեությունը: Մրցունակությունը բարձրացնելու համար կազմակերպությունը կարող է կիրառել մարքեթինգային տարբեր միջոցառումներ: Դրանք պայմանավորված են առաջին հերթին մարքեթինգի համալիրի բոլոր տարրերի ճիշտ օգտագործմամբ: Հենց դա է պատճառը, որ մրցունակության բարձրացմանն ուղղված մարքեթինգային բոլոր միջոցառումները սերտորեն կապված են միմյանց հետ, և դժվար է բաժանման սահմանագծեր անցկացնել դրանց միջև: Միաժամանակ պարզվում է, որ մարքեթինգի մի քանի հնարքների համադրությունն ավելի արդյունավետ է: Կազմակերպության կողմից իրականացվող գովազդը կարող է տարբեր նպատակներ հետապնդել, սակայն դրանք բոլորն էլ, ի վերջո, հանգում են մրցունակության բարձրացման խնդրին: Օրինակ՝ գրադարաններում որպես մարքեթինգային հնարք՝ կարելի է օգտագործել ցուցահանդեսները, միջոցառումները, գրքի շնորհանդեսները, հեռուստա-ռադիոհաղորդումների պատրաստումը, գրադարանների մասին հոդվածները և այլն: Դրանք կարելի է կազմակերպել ընթերցողներին առաջարկվող գրքերին ծանոթացնելու և այլ պատրվակներով: Նպատակն է՝ հնարավոր սպառողներին շահագրգռել մոտ ապագայում օգտվելու գրադարանի ծառայություններից: Գրադարանի կողմից կազմակերպվող ցուցահանդեսի կամ միջոցառման մասին անհրաժեշտ է տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներով կամ համապատասխան նամակներով ու հրավիրատոմսերով, հեռախոսային կարճ հաղորդագրություններով: Այդպիսի միջոցառումները պետք է իրականացվեն այնպես, որ մասնակիցների մեջ տպավորվեն ծառայության կամ ապրանքի առավելությունները մրցակիցների կողմից առաջարկվողների նկատմամբ: Որոշ նորամուծություններ ստեղծում են այնպիսի մրցակցային առավելություններ, որոնք հանգեցնում են շուկայում նոր, ավելի բարենպաստ դիրքերի գրավման կամ թույլ են տալիս գրավելու շուկայի այն մասնաբաժինները, որոնց ուշադրություն չեն դարձրել մրցակիցները: Գործ-

նականում ցանկացած մարքեթինգային միջոցառում, որն իրականացվում է կազմակերպության կողմից, միտված է նրա մրցունակության բարձրացմանը՝ ուղղակի կամ անուղղակի ճանապարհով: Չէ՞ որ կազմակերպության վերջնական նպատակներից մեկը (եթե ոչ՝ գլխավորը) շուկայում մրցակիցների կողքին հաջող դիրք գրավելն է և առավելագույն շահույթի ստացումը: Մրցակցությունը դրսևորվում է կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում: Կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը և ապահովմանը նպաստում են կառավարման գործառույթները, մեթոդներն ու կառուցվածքները, հետազոտություններն ու վերլուծությունները: Այդ նպատակով հետազոտվել և վերլուծվել են տարբեր գրադարաններ:

Ինչպես գիտենք, գրադարանների գործունեության հիմնական իմաստը նոր ռեսուրսներով համալրումն է, մշակումն ու պահպանումը, որն իրականացվում է գրադարանների ներքին միջավայրում: Բնական է, որ ներքին միջավայրի բոլոր ենթահամակարգերը անմիջականորեն առնչվում և ուղղակի ազդում են կազմակերպության վրա: Ներքին միջավայրի արդյունավետության բնութագրման համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն մատուցվող ծառայության ցուցանիշները, այլ այն, թե դրանք ինչքանով են համապատասխանում ընթերցողների պահանջներին: Մատուցվող ծառայության արժեքի ընկալումը սպառողի կողմից չի սահմանափակվում միայն որակի ու գնի չափանիշներով, արժեքի ընկալման վրա ազդում են նաև ծառայության մասին ձևավորված համբավը, ընդհանուր ճանաչումը, կազմակերպության վարկանիշը և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ կազմակերպության կառավարման արդյունավետությունը կախված է մի կողմից՝ բազմաթիվ ներքին և արտաքին փոփոխական գործոններից, իսկ մյուս կողմից՝ սոցիալական գործունեությունից, որոնց վարքագիծը միշտ չէ, որ նախօրոք միարժեքորեն հնարավոր է կանխատեսել և ծառայեցնել առաջադրված նպատակների իրականացմանը:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՐՅՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հարցումների անցկացման նպատակն է նպաստել գրադարանային գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ուսումնասիրել գրադարանների արտաքին և ներքին միջավայրերը, ընթերցողների ունեցած վերաբերմունքը գրադարանների նկատմամբ, ընթերցողների առաջարկները,

պահանջները, ակնկալիքները և այլն: Մոտեցման արդիականությունը նրանումն է, որ ընթերցողներն առանձնահատուկ խումբ են, ովքեր իրենց զբաղեցրած սոցիալական դերից բացի հայտնվում են նաև կազմակերպված գործունեությանը բնորոշ համալիր գործոնների՝ նոր աշխատանքային գործունեության, տեղեկատվության դաշտի առկայության, նոր սոցիալական միջավայրի, կյանքի պայմանների փոփոխության և այլ ազդեցությունների ներքո:

Հետազոտություններն ընթացել են 2016 թվականի օգոստոսից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի և Արագածոտնի մարզային գրադարաններում և Գավառի պետական համալսարանում՝ թվով 100 ընթերցողների շրջանում:

Հարցումների արդյունքում պարզվել է հետևյալը.


Հարցմանը մասնակից արական սեռի ներկայացուցիչները Գեղարքունիքի մարզային գրադարանում և Գավառի պետական համալսարանում 23%-ն են կազմում, իգական սեռի ներկայացուցիչները՝ 77%-ը: Գրեթե նույն ցուցանիշն է Արագածոտնի մարզային գրադարանում:

Ընթերցողների մեծ մասը՝ 79% (78%)-ը նախընտրում է թղթային տարբերակը, և միայն ընթերցողների 21% (22%)-ը տոկոսն է գերադասում օգտվել էլեկտրոնային տարբերակից՝ շուրջօրյա և ամենուրեք հասանելի լինելու համար:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ընթերցողների գերակշիռ մասը ուսանողներ են՝ զբաղվածություն ունեցող անձինք:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև երկու գրադարանների գրքային ֆոնդին, սպասարկած գրականության և ընթերցողների թվաքանակին՝ (2010-2014 թթ.)՝ ցույց տալու տարբերությունը 2015 թ. հետ համեմատած:


Արագածոտնի և Գեղարքունիքի մարզային գրադարանների գրքային ֆոնդը
2010-2014 թթ.
Գծապատկեր 1



Ինչպես երևում է գծապատկերից, Գեղարքունիքի մարզային գրադարանի գրքային ֆոնդը 2014 թ. կազմել է 79229 միավոր, Արագածոտնի մարզային գրադարանի գրքային ֆոնդը՝ 71748 միավոր: 2015 թ. Գեղարքունիքի մարզային գրադարանում մուտք է եղել 1048 միավոր, 01.01.2016 թ. կազմում է 80277 միավոր, իսկ Արագածոտնի մարզային գրադարանում մուտք է եղել 419 միավոր, 01.01.2016 թ. դրությամբ կազմում է 72167 միավոր:

Գրադարանների սպասարկած գրականության (տացքի) քանակը
2010-2014 թթ.


Գծապատկեր 2



Արագածոտնի մարզային գրադարանի սպասարկած գրականության (տացքի) քանակը 01.01.2015 թ. դրությամբ կազմել է 125.800 միավոր, Գեղարքունիքի մարզային գրադարանինը՝ 155.428 միավոր, հաճախումների

թիվը Արագածոտնի մարզային գրադարանում՝ 43.000 միավոր, իսկ Գեղարքունիքի մարզային գրադարանում՝ 45.265 միավոր:

**Գրադարանների ընթերցողների թվաքանակը 2010-2014 թթ.
Գծապատկեր 3**



Եթե 2014 թ. Գեղարքունիքի մարզային գրադարանն ունեցել է 7763 ընթերցող, Արագածոտնի մարզային գրադարանը՝ 4396 ընթերցող, ապա 2015 թ. Գեղարքունիքի մարզային գրադարանն ունեցել է 7139 ընթերցող, ամսվա կտրվածքով՝ մոտ 600 ընթերցող, իսկ Արագածոտնի մարզային գրադարանն ունեցել է մոտ 4272 ընթերցող, ամսվա կտրվածքով՝ մոտ 360 ընթերցող: Ընթերցողների թիվը գնալով նվազել է: Գեղարքունիքի մարզային գրադարանում տարբերությունը 624 ընթերցող է, Արագածոտնի մարզային գրադարանում՝ 124 ընթերցող:

Հետազոտության ընթացքում կատարված ուսումնասիրություններով ու սոցիարցումների վերլուծությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացություններին ու առաջարկներին:

- Կազմակերպել դասընթացներ՝ գյուղատնտեսություն, անասնապահություն, թեմաներով:
- Անգլերեն լեզվի անվճար դասընթացներ՝ դպրոցականների համար:
- Կազմակերպել դասընթացներ ավագ դպրոցի աշակերտների համար՝ մասնագիտական կողմնորոշմանն առնչվող հարցերի վերաբերյալ:
- Հետազոտությունները և վերլուծությունները հիմք են հանդիսանում եզրակացնել, որ գրադարաններում անհրաժեշտ է ներդնել երկարաժամկետ մարքեթինգային ռազմավարություն:

- Ստեղծել գրադարաններում մարքեթինգային ստորաբաժանումներ (փոքր գրադարաններում՝ մասնագետներ). այդպիսի ստորաբաժանումները կարող են շարունակական կերպով իրականացնել հետազոտություններ, որովհետև առավել հաճախակի անհրաժեշտ է ուսումնասիրել ընթերցողների պահանջմունքներն ու հետաքրքրությունները և գտնել համապատասխան լուծումներ:
 - Կազմակերպության կառավարման արդյունավետությունը կախված է մի կողմից բազմաթիվ ներքին և արտաքին փոփոխական գործոններից, իսկ մյուս կողմից՝ սոցիալական գործունեությունից: Առհասարակ, գրադարանների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է գրադարանի ներքին միջավայրում աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակը բարձրացնել: Կարևոր են նաև նրանց վարքը և փոխհարաբերությունները, քանի որ դրանց առանձնահատկությունները վճռորոշ ներգործություն են ունենում նպատակների իրականացման և խնդիրների լուծման գործընթացի արդյունավետության վրա:
 - Կարևորվում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացումը, որովհետև յուրաքանչյուր աշխատակից հանդես է գալիս որպես այդ գործընթացի արդյունավետության վրա ազդող վճռորոշ փոփոխական:
 - Կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման տեսակետից կարևոր է մարդկանց և նրանց խմբերի վարքի վրա ազդելու այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն վերջիններիս պահանջմունքների բավարարմանը և կազմակերպության առաջադրված նպատակների իրականացմանը: Այս իմաստով կարևորվում է մարդկանց մասնագիտական կողմնորոշմանն առնչվող հարցերի ճիշտ լուծումը:
- Ինչպես գիտենք, PR³-ը մարտավարության տարրերից մեկն է և գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է համապատասխան մասնագետների աշխատանքից: PR գործընթացը պետք է բխի գրադարանի զարգացման ռազմավարությունից և ծառայի գրադարանի առաքելությանը:
- Պետք է ստեղծել և պահպանել զանգվածային լրատվության միջոցների հետ կապը: Այստեղ հիմնական հնարքներն են համարվում գրադարանի կողմից մամլո ասուլիսների կազմակերպումը, տեղեկատվական թերթիկ-

³ PR- Public Relations (հանրային կապեր)

ների զանգվածային տարածումը, հեռուստա-ռադիոհաղորդումների պատ-
րաստումը, գրադարանների մասին հոդվածները, ՋԼՄ-ների
խմբագիրների հետ բարյացակամ շփումների հաստատումը, տարեկան
հաշվետվությունները, իրադարձային բնույթի միջոցառումների
կազմակերպումը, հովանավորների ներգրավումը և այլն:

- Երկու գրադարաններում էլ առաջնային է համարվում մանկական բաժնին
կից բացել հոգեբանի անկյուն, արվեստի բաժնին կից բացել կինոդիտման,
երաժշտության ունկնդրման անկյուն, ունենալ կայքէջ, առանձին ընթերցա-
սրահ և դահլիճ. դահլիճի բացակայությունը լուրջ խոչընդոտ է միջոցա-
ռումները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:
- Լավ եղանակային պայմանների դեպքում կազմակերպել բացօթյա միջոցա-
ռումներ (հյուրընկալ տարածքներ, բացօթյա դահլիճ, ընթերցասրահներ):
- Անհրաժեշտություն է նկատվում համալրել գրքային ֆոնդը ժամանակակից
արտասահմանյան հեղինակների գրքերով, ինչպես նաև ավելացնել
ունեցած գրքերի քանակը:
- Ժամանակակից տեխնոլոգիաներով վերագինումը, տեխնոլոգիաների ներ-
դնումը, գրադարանային հավաքածուի թվայնացումը մարզային գրադա-
րան

ների հեռանկարային զարգացման կարևորագույն խնդիրներից է: Ուստի
պետք է թվայնացման գործընթաց սկսել նաև մարզային գրադարաններում՝
կարևորելով նոր տեխնոլոգիաների դերը թվայնացման և գրադարանային
գործում:

BALASAN HARUTYUNYAN

WAYS OF INCREASING MANAGEMENT EFFICIENCY IN REGIONAL LIBRARIES SUMMARY

The Library marketing is so valuable, today it is a new and very important ca-
tegory for the Armenian Libraries. And this article is about the ways how to increase
efficiency for 2 libraries.

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐԻ

Հայաստանի ազգային գրադարան

Մատենագիտության և գրադարանագիտության բաժին

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն,
տնտեսագիտության և կառավարման ամբիոն, դասախոս*

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ գրադարանային մարքեթինգ, մարքեթինգային հետազոտություն, վիճակագրական վերլուծություն, ռազմավարական ծրագիր, էլեկտրոնային հարցում, SWOT վերլուծություն, թվային մարքեթինգ

Keywords. Library marketing, Marketing research, Statistical analysis, Strategic plan, Email request, SWOT analysis, digital marketing

Արդի ժամանակաշրջանում տեղի է ունենում գրադարանների աշխատանքի բովանդակության ձևերի և մեթոդների ձևափոխություն: Դրանց մշակութային-հասարակական գործունեությունը վերածվում է մշակութային-տեղեկատվական և գիտատեղեկատվական գործունեության: Գրադարանը դառնում է մշակութային տեղեկատվական կենտրոն: Հետևաբար, ժամանակակից գրադարանների գործառույթները պահանջում են աշխատանքի հստակ նախապատրաստում և որոշակի ուղղվածություն: Առաջնահերթ խնդիրներից է դառնում մշակութային գործունեության դերի ուժեղացումը՝ կապված հասարակության մեջ ճգնաժամային երևույթների, հոգևոր-բարոյական արժեքների, ընդհանրապես ամբողջ մշակույթի նշանակության նկատմամբ փոխված մոտեցումների հետ: Գրադարանի մշակութային գործառույթը պետք է բարձրացնի ընթերցողների ազատ հոգևոր մտածողությունը, հաղորդակից դարձնի հայրենական և համաշխարհային մշակութային արժեքներին, ստեղծի պայմաններ մշակութային գործունեության համար: Խիստ արդիական է հատկապես գրադարանների վերազինումը, զարգացումը, տարաբնույթ ծրագրերի իրականացումը, ակտիվ համագործակցության հաստատումը այլ գրադարանների հետ: ՀՀ գրադարանային ոլորտի հիմնախնդիրների բացահայտման ու զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ինչպե՞ս կարելի է օգտվողներին «բերել» գրադարան,
- ինչպե՞ս կարելի է առավել արդյունավետ տարածել գրքերի մասին տեղեկատվությունը,
- ինչպե՞ս դարձնել գրադարանից օգտվելու գործընթացն ավելի հեշտ,
- ի՞նչ փոփոխությունների պետք է ենթարկել գրադարանային համակարգը՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի զարգացման հետ:

Հայաստանի գրադարանային համակարգի զարգացման կարևորագույն գործոններից մեկը գրադարանային մարքեթինգն է: Ճիշտ կիրառվող մարքեթինգային գործիքներն ու միջոցները կարող են նպաստել գրադարանի դերի բարձրացմանը, և գրադարանը մրցակցային պայմաններում կարող է հասնել լուրջ առավելությունների: Այդ իսկ պատճառով էլ մարքեթինգային միջավայրը դառնում է շատ կարևոր և հեռանկարային:

Առաջնային տեղեկատվության հավաքման ամենահիմնական և կարևոր մեթոդը հարցումն է, որի ընթացքում նախապես մշակված հարցերի տրման և ստացված պատասխանների վիճակագրական վերլուծության միջոցով տեղեկություններ են հավաքվում կոնկրետ երևույթների մասին: Հարցման արդյունքում հավաքված տեղեկությունները կարող են օգտագործվել կոնկրետ հարցերի կամ թեմաների մասին ինչպես քանակական (վիճակագրական), այնպես էլ որակական վերլուծությունների անցկացման նպատակով:

Հետազոտությունն իրականացվել է մասամբ Հայաստանի ազգային գրադարանում և լայն տարածում է գտել համացանցում՝ SurveyMonkey կայքի միջոցով¹: Հետազոտության գործիքը երկու դեպքում էլ ընտրվել է հարցաթերթիկը, որը բաղկացած է մի դեպքում (Ազգային գրադարանում) տասնհինգ հարցից, իսկ մյուս դեպքում (համացանց)՝ տասը հարցից: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 500 անձ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Ազգային գրադարանի տարբեր ուղղություններով ծավալվող գործունեության անմիջական ազդեցությունը ընթերցասեր հասարակության վրա:

Որպես հիմնական վարկած առաջադրվել է հետևյալ դրույթը.

Ազգային գրադարանի անձնակազմի կողմից սպասարկումը և կազմակերպվող միջոցառումներն էական ազդեցություն ունեն գրադարանային

¹ <https://ru.surveymonkey.com/r/7XP6KZL>

գործի կազմակերպման ոլորտում: Հետազոտության օբյեկտն է Ազգային գրադարանի անձնակազմի կողմից ընթերցասեր հասարակության «կառավարումը»:

Ժամանակակից պայմաններում մարքեթինգային վերլուծական մեթոդները բազմաթիվ են, սակայն ամենատարածվածը SWOT վերլուծությունն է՝ ռազմավարական պլանավորման մեթոդ, որը հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության արտաքին և ներքին միջավայրի գործոնների ազդեցությունը²: SWOT վերլուծությունը միջանկյալ օղակ է կազմակերպության առաքելության ձևավորման և նպատակների ու խնդիրների որոշման միջև:

Տվյալ փորձագիտական հարցումը իրականացվում է SWOT վերլուծական ծրագրի միջոցով, որը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- * նախ որոշվում է կազմակերպության զարգացման ուղղությունը,
- ** վերլուծվում են կազմակերպության ուժեղ կողմերը և շուկայական իրավիճակը՝ բացահայտելու արդյո՞ք կազմակերպությունը կարող է շարժվել տվյալ ուղղությամբ և ի՞նչ ձևով դա կարելի է իրականացնել,
- *** իրականացվում է նպատակադրում՝ հաշվառելով իրական հնարավորությունները:

SWOT վերլուծությունից հետո ավելի հստակ և պարզ են դառնում կազմակերպության առավելություններն ու թերությունները և շուկայական իրավիճակը: SWOT վերլուծությունը կազմակերպությանը զարգացման արդյունավետ ուղի ընտրելու, վտանգներից խուսափելու, առկա ռեսուրսները և հնարավորություններն արդյունավետ օգտագործելու հնարավորություն է ընձեռնում:

SWOT վերլուծությունը չի սահմանափակվում միայն S, W, O և T կողմերի ուսումնասիրմամբ, այլ այն ենթադրում է նաև կազմակերպությունների կողմից կոնկրետ ռազմավարությունների մշակում, որի արդյունքում ի հայտ են գալիս հետևյալ դաշտերը.

SO - այն գործողությունն է, որն անցկացվում է այն դեպքում, երբ կազմակերպության հնարավորությունները մեծացնելու համար օգտագործվում են ուժեղ կողմերը:

WO - այն գործողությունն է, որն անհրաժեշտ է անցկացնել, որպեսզի հաղթահարվեն թույլ կողմերը և օգտագործվեն առկա հնարավորությունները:

² https://hy.wikipedia.org/wiki/SWOT_վերլուծություն: SWOT վերլուծությունը ենթադրում է բիզնեսի վրա ազդող ընկերության ուժեղ և թույլ կողմերի (արտաքին միջավայրի), հնարավորությունների և վտանգների (ներքին միջավայրի) գնահատում:

ST - գործողությունները, որոնք օգտագործում են կազմակերպության ուժեղ կողմերը՝ սպառնալիքներից խուսափելու համար:

WT - միջոցներն են, որոնք նվազեցնում են կազմակերպության թույլ կողմերը՝ սպառնալիքներից խուսափելու համար:

Ակնհայտ է, որ կարևոր է ոչ միայն բացահայտել հնարավորություններն ու վտանգները, այլև փորձել գնահատել որևէ սպառնալիքի կամ հնարավորության հաշվառման կարևորությունը՝ ելնելով ընկերության ռազմավարության տեսակետից:

Ներկայումս, ճիշտ և ժամանակին ռազմավարական որոշում ընդունելը ելակետային գործոն է կազմակերպության բարեհաջող գործունեության համար:

Արդեն իսկ կատարված հարցման արդյունքներով և SWOT վերլուծության կատարման կարգի ներկայացումից հետո ստորև բերված աղյուսակով ներկայացնում ենք Ազգային գրադարանի SWOT վերլուծության աղյուսակը.

Աղյուսակ 1.

Ազգային գրադարանի SWOT վերլուծության ելակետային տվյալները

Ուժող կողմեր (S)	Թույլ կողմեր (W)
1) գրադարանային ծառայությունների մատուցման բարձր որակ 2) աշխատանքային ժամերի հարմարությունը 3) գրադարանի տեղադրությունը 4) սպասարկող անձնակազմի կողմից, ծառայությունների վերաբերյալ հստակ տեղեկատվության մատուցում 5) գրադարանավարների խորհրդատվության բարձր մակարդակ	1) միջոցառումների վերաբերյալ այցելուներին տեղեկացնելու հստակ մեխանիզմի բացակայություն 2) էլեկտրոնային շտեմարանների թերի լինելը 3) գիտական պարբերականներին անհասանելիություն ընթերցողի կողմից 4) ընթերցողի ինքնուրույնության բացակայություն 5) տեխնիկական միջոցների հին և անսարք լինելը
Հնարավորություններ (O)	Սպառնալիքներ (T)
1) ինտերիերի բարելավում 2) մատուցվող ծառայությունների ընդլայնում 3) միջազգային համագործակցության հնարավորություն 4) գրադարանային ֆոնդի թարմացում 5) հանդիպումների կազմակերպում մշակութային գործիչների հետ	1) կոմունալ ոչ լիարժեք պայմանների առկայություն 2) կազմակերպվող միջոցառումների արդիական չլինելը 3) օտարալեզու գրականության արդիական չլինելը և քիչ քանակությունը 4) գրքերի նախնական պատվերի եղանակը 5) ընթերցողների հոսքի դանդաղեցումը

Աղյուսակ 2.

Ազգային գրադարանի SWOT վերլուծության մատրիցա

		O					T				
		1	2	3	4	5	1	2	3	4	5
S	1	X									
	2		X								
	3					X	X				
	4										
	5										X
W	1							X			
	2			X	X						
	3										
	4									X	
	5										

Ուժեղ կողմեր-հնարավորություններ (S-O) դաշտում հնարավոր համընկնումներն են՝

S1O1- ինտերիերի բարելավումը, ընթերցանության համար նպաստավոր և հաճելի պայմանների ստեղծումը վկայում են գրադարանային ծառայությունների բարձր որակի մասին:

S2O2- աշխատանքային ժամերի ընդլայնումը ենթադրում է գրադարանային ծառայությունների մատուցում բնակչության այն խմբին, որն աշխատանքն ավարտում է ուշ ժամի:

S305- գրադարանի տեղադրությունը հարմար է հանդիպումների կազմակերպման համար:

Ուժեղ կողմեր-սպառնալիքներ (S-T) դաշտում հնարավոր համընկնումներն են՝

S3T1 – գրադարանի տեղադրությունը թույլ է տալիս ապահովել ջեռուցման կայուն համակարգ:

S5T5 – գրադարանի տեղադրությունը նպաստավոր է սպասարկման բարձր որակի պայմաններում այցելուների բարձր հոսքի ապահովման համար:

Թույլ կողմեր-հնարավորություններ (W-O) դաշտում հնարավոր համընկնումներն են՝

W2O3 – էլեկտրոնային օտարալեզու շտեմարանների թերի լինելը բացասական է ազդում գրադարանի հեղինակության վրա:

W2O4 – գրադարանային ֆոնդը գրականությամբ թարմացվելու կարիք ունի:

Թույլ կողմեր-սպառնալիքներ (W-T) դաշտում հնարավոր համընկնումներն են՝

W1T2 – կազմակերպվող միջոցառումների ժամանակակից չլինելը և ընթերցողին դրանց մասին չտեղեկացնելը բացասաբար է անդրադառնում գրադարանի հեղինակության վրա:

W4T4 – նախնական պատվերի գործող եղանակը խոչընդոտում է գրադարանում ընթերցողի ինքնուրույնությանը:

Այսպիսով, ընթերցասեր հասարակության և Հայաստանի ազգային գրադարանի «փոխհարաբերությունների» տարբեր ասպեկտների վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները բերեցին մի շարք եզրահանգումների:

Նախ՝ ընդգծենք այն հանգամանքը, թե հասարակության ընթերցասեր անդամները որքանով կօգտվեն գրադարանից, սերտ կապված է գրադարանային սպասարկման և գրադարանային գործի զարգացվածության հետ: Գրադարաններից օգտվողները բևեռացված են, այսինքն՝ օգտվողների մեծ մասը, հարցված անդամների 50%-ը ուսանողներ են: Դա փաստում է, որ հասարակության անդամ-գրադարան կապն ապահովում է ուսումնական հաստատությունը, սակայն անուղղակի կերպով:

Հարցման արդյունքների ամփոփումը տվեց ևս մեկ կարևոր գնահատական: Ընթերցասեր հասարակության համար մշակված չեն այնպիսի օնլայն հարթակներ, որոնք կբավարարեն նրանց պահանջները և պատվիրելու նպատակով չեն այցելի գրադարան և ժամանակ կորցնեն: Իհարկե, ներկայումս

գործում է [www. Armunicat.am](http://www.Armunicat.am)-ը՝ Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի կայքէջը, սակայն առկա տեխնիկական թերությունները ստիպում են այնուամենայնիվ այցելել գրադարան: Սա է, թերևս, պատճառը, որ հարցվածների 83%-ը նախընտրում է տպագիր ընթերցանությունը. հավելումն նշենք, որ ոչ միայն Ազգային գրադարանում, այլ հանրապետության այլ գրադարաններում գրքերի թվայնացման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է:

Լուրջ ուսումնասիրությունների կարիք կա Ազգային գրադարանի կողմից միջոցառումների կազմակերպման ոլորտում: Հարցումների արդյունքում հարցվածների՝ կազմակերպվող միջոցառումներից տեղեկացված 35%-ից միայն 10%-ն է մասնակցում միջոցառումներին, իսկ 56%-ը՝ չի մասնակցում: Քանի որ ուսումնասիրվող ոլորտի հանդեպ հետաքրքրություն կարելի է արթնացնել յուրաքանչյուրիս ներսում, պետք է փաստել, որ այստեղ խնդիրը գրադարանի կողմից միջոցառման կազմակերպման թերություններն են, անհամապատասխանելիությունը ընթերցասեր հասարակության հետաքրքրություններին: Կատարված ուսումնասիրությունները լուրջ մտահոգության առիթ, այնուամենայնիվ, տվեցին: Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ ստորև ներկայացնում ենք մի շարք առաջարկություններ՝ հույս ունենալով, որ հնարավորության դեպքում դրանք որոշակի արդյունք կապահովեն:

Առաջարկում ենք առավել սերտ դարձնել Ազգային գրադարան-ուսումնական հաստատություններ կապը: Նախ, դա կարելի է անել Ազգային գրադարանի կողմից ուսումնական հաստատություններում արտագրադարանային միջոցառումներ կազմակերպելու միջոցով: Երկրորդ՝ համագործակցությունը ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների հետ թույլ կտա ապահովել գրադարանային շրջանակներում կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը:

Բարդ, երբեմն անգամ անարդյունավետ է գիրք պատվիրելու գործընթացը: Առաջարկում ենք մշակել և ներդնել այնպիսի օնլայն պատվիրման և առաքման հնարավորություն, որը կդարձնի պատվիրման գործընթացը ավելի ժամանակակից և թույլ կտա ընթերցողին խնայել ժամանակը: Միջոցառումների կազմակերպման թերությունները միանգամից ակնառու դարձան տեղեկացվածության մակարդակի և այցելության անհամապատասխանելիության հետևանքով: Առաջարկում ենք հետազոտություն իրականացնել՝ պարզելու համար, թե ինչ պահանջմունքներ ունի ընթերցասեր հասարակությունը, ապա և կազմակերպել միջո-

ցառում: Այդ առումով առաջարկում ենք ստեղծել աշխատանքային խումբ, որի մեջ պարտադիր ներառված լինի գրադարանային գործի հմուտ մարքեթոլոգ:

Այսպիսով, Հայաստանում գրադարանների զարգացման ոլորտում որոշակի դրական շարժեր նկատվում են, սակայն դրանք բավարար չեն կարող համարվել լիարժեք և արդիական գրադարաններ ու գրադարանային ցանց ունենալու համար: Մատնանշվեցին հիմնական աչք զարնող խնդիրները, որոնց լուծումները, մեր կարծիքով, կնպաստեն գրադարանային ոլորտի զարգացմանն ու ի վերջո, մեզ մեկ քայլ առաջ կուղղորդեն քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացում: Եվ վերջում հավելենք, որ յուրաքանչյուր գրադարան պետք է հստակ սահմանի սեփական տեսլականն ու առաքելությունը՝ հետազայում դրանցով սկզբունքայնորեն առաջնորդվելու նպատակով:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի գրադարանային համակարգի զարգացման կարևորագույն գործոններից մեկը գրադարանային մարքեթինգն է: Հետազոտությունն իրականացվել է մասամբ Հայաստանի ազգային գրադարանում և լայն տարածում է գտել համացանցում՝ SurveyMonkey կայքի միջոցով: Ժամանակակից պայմաններում մարքեթինգային վերլուծական մեթոդները բազմաթիվ են, սակայն ամենատարածվածը SWOT վերլուծությունն է, որի միջոցով Հայաստանի ազգային գրադարանում իրականացվել է փորձագիտական հետազոտություն:

MERY MANUKYAN, NARINE MANUKYAN
USAGE OF MARKETING TOOLS TO ENHANCE THE ACTIVITY
AND EFFECTIVENESS OF LIBRARIES
AND SWOT ANALYSIS OF RESEARCH RESULTS
SUMMARY

Library marketing is one of the most important factors for development of library system in Armenia. The survey partly was conducted in the National Library of Armenia and has spread through the SurveyMonkey website. Modern analytical methods of marketing are numerous, but the most popular is the SWOT analysis, through which an expert research was conducted in the National Library of Armenia.

ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գրադարան-մատենադարանների ձևավորման պատմական ընթացքն անցել է զարգացման տարբեր փուլերով: 19-րդ դարի վերջին, չնայած Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում առկա քաղաքական, տնտեսական, հասարակական ծանր պայմաններին, գիրքը, մամուլը, տպագրությունը, մշակույթը, ինչպես նաև գրադարանները չէին կորցնում իրենց արդիական հնչեղությունը: Ժողովրդի տարբեր խավերի կողմից ստեղծված գրադարանները հնարավորություն էին հայ գրականությանը և մշակույթին առնչվելու, ինչպես նաև ազգային արժեքները գնահատելու համար:

Ընթերցողի դատին ենք հանձնում «Շարժական մատենադարան» խորագրով հոդվածը՝ տպագրված Թիֆլիսի «Մանկավարժանոց» ամսագրում (1884 թ., թ. 1, էջ 48-51)՝ հնարավորություն ընձեռելով ծանոթանալու 19-րդ դարավերջին գրադարանային գործի կազմակերպման սկզբունքներին, պահանջներին և նրբություններին:

Հայազն բազմաթիւ ուսուցիչներն ուսուցչական պաշտօն են վարում գիւղերում, հեռաւոր անկիւններում և խորշերում, որտեղ ոչ դպրոցն ունի գրքեր և ոչ իրանք կարօղ են երբեք իրանց հաշուով ընթերցանութեան կարևոր գրքեր ձեռք բերել: Նոցա համար ևս, առանձին բարեբաղդութիւն կլինէր, եթէ սահմանվէր շարժական մատենադարան: Այս մատենադարանի, որ առ այժմ կարօղ էր միայն մի կեդրօնատեղում, օրինակ Թիֆլիսում, սահմանվել, նպատակը կլինէր բովանդակել իւր մէջ և հասցնել գիւղական ուսուցիչներին կարդալու այն մանկավարժական և գրականական հեղինակութիւններն, որոնք անհրաժեշտ կարևոր են համարվում ուսուցչին նորա բարոյական և մտաւորական զարգացման համար, ինչպէս սնունդը ֆիզիքական զարգացման համար:

Ժամանակով գուցէ իւրաքանչիւր թեմական վերատեսուչ հնարաւոր համարէ թեմական շարժական մատենադարան կազմել:

Հոդվածի էլեկտրոնային տարբերակը հասանելի է համացանցի հետևյալ հասցեով՝ <http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/mankavarjanoc/1884/1.pdf>

Շարժական մատենադարան կազմելու համար առաջարկում ենք ահա քանի մի կարևոր նախագիտելիքներ իբրև նախագիծ, որը կարող է մշակվել ի հարկէ:

Մատենադարանը կարող է երեք բաժանումն ունենալ.

- 1) Գրականական բաժանումն (ընդհանուր և ազգային գրականական պատմություն, ընդհ. և ազգ. Պատմություն, աշխարհագրություն, քննադատություն, բանաստեղծություն և ընդհանուր գրականական երկասիրություններ):
- 2) Գիտնական բաժանումն (լեզվաբանություն, քերականություն, թուաբանություն, բնագիտություն, բնական պատմություն, առողջապահություն, առտնին, գիւղական և քաղաքական տնտեսություն):
- 3) Մանկավարժական բաժանումն (կրօնագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, մանկավարժություն, մէտօդիկա, մանկավարժութեան պատմություն, դպրոցական օրէնսգիտություն):

Մատենադարանի մէջ պիտի լինին վերոյիշված բաժանմունքին վերաբերյալ հանրահոշակ հեղինակների երկասիրություններ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն: Թեմական վերատեսչի մասնակցութեամբ, մատենադարանը կազմելու համար պիտի ընտրվի յանձնաժողով, որի անդամները պիտի հոգան և գտնեն կարևոր դրամագլուխը, կգնեն գրքերը և կտպեն գրքերի ցուցակը: Վարչական յանձնաժողովը, բացի թեմական վերատեսչից, որն յանձնաժողովի նախագահ պիտի լինի, կկազմվի չորս տարի ժամանակով ընտրված երեք անձներից, որոնք կհոգան մատենադարանի պահպանութեան, ընդարձակութեան և քարտուղարի ռոճկի մասին: Մատենադարանի ցուցակը ձրի պիտի ուղարկվի ամեն ուսուցչին, ով կխնդրէ վարչութենից: Գրքերը խնդրելու նամակը վարչական յանձնաժողովին պիտի ուղղվի: Նամակում (որ կարող է 3 կօպ. Բաց նամակ լինել) նշանակված պիտի լինի.

ա) Խնդրած գրքերի ճիշդ վերնագիրը:

բ) Ժամանակը, որքան որ խնդրողը ցանկանում է պահել գրքերը, որպիսի միջոցը չէ կարող երբեք երկու ամսից ատելի լինել:

գ) Խնդրողի ճիշդ հասցէն, թէ որ ճանապարհով կարելի է նորան գիրք հասցնել, եթէ գիւղը նամականոցի (պօստայի) ճանապարհի վերա չէ:

դ) Երկբառ վկայություն հոգաբարձութենից կամ տեղական քահանայից թէ խնդրող անձն արդարև ուսուցչական պաշտօն է վարում:

1. Գրքերը պիտի վերադառնան առ վարճական յանձնաժողովն, ժամանակամիջոցը լրանալիս, նոյն գրութեամբ ինչպէս որ ուղարկված էին: Միայն վերադարձի ծախսը ուսուցչի վերա է:

2. Իւրաքանչիւր անգամ խնդրած հատորների քանակը 3 գրվածքային ւաւելի պիտի չլինի:

3. Յառաջագոյն ստացած գրքերն անշուշտ վերադարձրած պիտի լինին, նոր գրքեր ստանալու համար:

4. Այն ուսուցիչների խնդիրներն այլևս ընդունվելու չեն, որոնք վերադարձրած չեն լինի գրքերն երկու անգամ, նշանակված միջոցին:

5. Ի դէպս գրքեր կորցնելու կամ վնասելու, ստացող ուսուցիչը պարտաւոր է վճարել գրքերի գինը, որը նշանակված պիտի լինի ցուցակում, կամ նոցա փոխարէն նորերը գնել և ուղարկել:


Պատրաստեց՝

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ

«Բանքեր Հայաստանի գրադարանների»

հանդեսի պատասխանատու քարտուղար

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**



2016 թ. հոկտեմբերի 17-19-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում և Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը՝ նվիրված հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին: Համաժողովի կազմակերպիչներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ՀՀ Մշակույթի նախարարությունը, Հայաստանի ազգային գրադարանը: Համաժողովին մասնակցում էին մշակույթի, գիտության ոլորտի հայ և օտարազգի ներկայացուցիչներ Հայաստանից և արտերկրից:

Համաժողովի նպատակը՝ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային, տպագիր և անտիպ ժառանգության պահպանումն էր, ինչով էլ պայմանավորված էին զեկույցների թեմաները: Զեկույցումների առանցքը հայ գիրքն ու հայ մամուլն էին: Եռօրյա քննարկումներից հետո համաժողովի կազմակերպիչները և մասնակիցները ընդհանրացրին իրենց մտահոգությունները և ձևավորեցին առաջարկությունների մի փաթեթ, որն էլ ցանկանում ենք ներկայացնել ընթերցող հանրությանը:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի առիթով 2009 թվականի օգոստոսի 25-27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ: Առաջին համաժողովին մասնակցեցին նաև ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը և ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Մայր Աթոռի և ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի «Գրիգոր և Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնի նախաձեռնությամբ հրավիրված համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա.» Հայագիտական-Աստվածաբանական կենտրոնի, Երևանի Սուրբ Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանի, ԵՊՀ-ի գրադարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հայագիտական գրադարանի, Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, Հանրապետական գիտաթժշկական գրադարանի, Հայաստանի Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի, Հայաստանի ազգային գրապալատի, Երաժշտագիտական գրադարանի, Հայաստանի մարզային գրադարանների, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան գրադարանի, Մշակութային արժեքների պահպանության գործակալության աշխատակիցներ, ինչպես նաև ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից, Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունից, Չմմառի

Հայ Կաթողիկե Արժիվյան միաբանությունից, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից, Հարվարդի համալսարանից (Widener Library Middle East Division), Միչիգանի համալսարանից (ԱՄՆ), - Կալիֆորնիայի համալսարանից (ԱՄՆ, Ֆրեզնո), ՀԲԸՄ Նուբարյան գրադարանից (Ֆրանսիա, Փարիզ), Բրիտանական գրադարանից (Մեծ Բրիտանիա), «Գրիգոր և Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնից (ԱՄՆ), Ամերիկայի - Հայկական գրադարանից և թանգարանից (ԱՄՆ), Հայկական հետազոտությունների ազգային ընկերակցությունից (ԱՄՆ), Ֆրանսիայի Ազգային գրադարանից,

Հայկական մշակութային միությունից (ԱՄՆ), Ռուսաստանի Ազգային գրադարանից և Ս. Ներսես Ճեմարանից (ԱՄՆ):

Եռօրյա քննարկումների ընթացքում լսվեցին մասնակից գրադարանների ու հաստատությունների հաղորդումները և թեմատիկ զեկուցումները: Քննարկվեց - հարցերի լայն շրջանակ՝ տեղեկատվության և նյութերի փոխանակության, գրադարանների հավաքածուների էլեկտրոնային քարտազման, թվայնացման և - պահպանման, Հայաստանի գրադարանների ներկա վիճակի, հայագիտական գրադարանների միջև համագործակցության վերաբերյալ և այլ հիմնախնդիրներ:

2012 թվականի հոկտեմբերի 5-7-ը կայացավ հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, լիագումար նիստերի և քննարկումների ընթացքում վեր հանվեցին գրքափոխանակության կազմակերպման խնդիրները հայագիտական հաստատությունների և գրադարանների միջև, հայ հնատիպ գրքի, հայ պարբերական մամուլի երկարաժամկետ պահպանության հարցերը, այդ հավաքածուների թվայնացման և համացանցում դրանք հասանելի դարձնելու անհրաժեշտությունը: Քննարկման առանձին թեմա դարձավ «Երբեք գրադարանների» հարցը:

Համաժողովի նյութերը և համաժողովի բանաձևը հասանելի են <http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html> հասցեից:

2014 թվականի հոկտեմբերի 6-7-ը կայացավ հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովը. նյութերը և համաժողովի բանաձևը հասանելի են <http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html> հասցեից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայկական գրադարանների միջազգային համաժողովի մշտական կազմակերպիչներն են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ ի դեմս «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի և ՀՀ Մշակույթի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի ազգային գրադարանը:

Համաժողովի մասնակիցներն են Հայաստանի գրադարանային և տեղեկատվական գիտությունների մասնագետները, գործնական աշխատանքի փորձ ունեցող գրադարանավարները, հայագետները, գրադարանային գործի կազմակերպիչները, արտերկրի գրադարաններում աշխատող հայ մասնագետները, հայ եկեղեցիներին կից գործող գրադարանների, դպրատների ներկայացուցիչները, հոգևորականները:

Համաժողովի նշանաբանն է «Անցյալի պահպանություն հանուն ապագայի»:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաժողովի առաքելությունն է հայագիտական կենտրոնների միջև գրքափոխանակության կազմակերպման գործին աջակցելը, աշխարհով մեկ սփռված հայագիտական կենտրոններին օգնելը՝ համակարգելու իրենց ուժերը հայկական տպագիր ժառանգության հայտնաբերման, հաշվառման և գրացուցակավորման գործում, այդ ժառանգության հանրայնացման ու երկարաժամկետ պահպանության ուղղությամբ շարունակաբար հոգ տանելը:

Համաժողովի նպատակն է գրադարանային գործի առաջընթացն ապահովելու, ժամանակակից մարտահրավերների պայմաններում գրադարանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու խնդրով մեկ սեղանի շուրջ հավաքվելը և աշխարհասփյուռ հայ տպագիր ժառանգության անխաթար պահպանության և այն գալիք սերունդներին հանձնելու շուրջ համատեղ որոշումներ կայացնելը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

ա. կազմակերպել և անցկացնել քննարկումներ հայագիտական կենտրոնների և գրադարանների միջև գրքափոխանակության կազմակերպման հարցերի շուրջ,

բ. աջակցել հայագիտական հավաքածուների երկարաժամկետ պահպանության խնդիրների լուծմանը,

գ. աշխարհի տարբեր վայրերում քարոզչական գործունեություն ծավալել՝ ներկայացնելով հայ գրքի անցած ուղին, հայկական գրատպության պատմությունը և արդի վիճակը,

դ. հետազոտել արտերկրի գրադարաններում պահվող հայ տպագիր նյութերի քարտարանները և նոր նյութերի հայտնաբերման մասին տեղյակ պահել Հայաստանի ազգային գրադարանին,

ե. խթանել հայ գրադարանավարների մասնակցությունը թվայնացման տարաբնույթ աշխատանքներին,

զ. ներգրավել երիտասարդներին՝ հայ ժողովրդի դարերով ստեղծած տպագիր ժառանգության արժևորման, պահպանության և տարածման գործընթացներին,

է. աջակցել միջազգային գրադարանագիտական կազմակերպությունների հետ համագործակցությանը:

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ

Հայկական գրադարանների միջազգային համաժողովը հրավիրվում է երկամյա պարբերականությամբ՝ Գրադարանավարի օրը (հոկտեմբերի 7) կամ Սրբոց - Թարգմանչաց տոնին (հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը):

Համաժողովի տևողությունն է երկու օր: Առաջին օրվա քննարկումները կայանում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանում, իսկ երկրորդ օրվա քննարկումները՝ Հայաստանի ազգային գրադարանում: Համաժողովը ընտրում է գործադիր մարմին, որի հիմնական գործառույթը ընթացիկ հարցերի լուծումն է: - Գործադիր մարմինն ընտրվում է երկու տարի ժամկետով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը կայացավ 2016 թ. հոկտեմբերի 17-19-ը Մայր Աթոռում (ք. Վաղարշապատ) և Հայաստանի ազգային գրադարանում (Երեւան):

Համաժողովը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին: Համաժողովի օրերի տեղափոխությունը պայմանավորված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին նվիրված և հոկտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում անցկացվող գիտաժողովներով:

Համաժողովն արձանագրեց այն նոր ձեռքբերումները, որոնք տեղի են ունեցել հայկական գրադարանների երրորդ համաժողովից հետո: Արձանագրեց, որ մատենագիտական շտեմարանների ձևավորման և գրադարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել են նշանակալի աշխատանքներ: Ձևավորվել են.

ա. «Հայ գիրք» շտեմարանը:

բ. Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը:

գ. Հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը:

դ. «Հայ մամուլի համահավաք գրացուցակը»:

Երկօրյա համաժողովի մասնակիցները ձևավորեցին նոր գործադիր մարմին հետևյալ կազմով.

Աճեմյան Բորիս - ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի տնօրեն:

Զարգարյան Տիգրան - Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն:

Թահմազյան Լալագե - Սպահանի Հայոց Թեմի Սուրբ Ամենփրկիչ Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի գրադարանավարի օգնական:

Հովակիմյան Վահան վարդապետ - Վիեննայի Մխիթարյան միաբանություն:

Ղազարյան Հայկանուշ - Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն:

Մինասյան Կարապետ - ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրենի պաշտոնակատար:

Ներսեսյան Ներսես ավագ քահանա - Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Հայոց թեմի հոգևորական:

Պողոսյան Արարատ քահանա - Ս. Էջմիածնի Մատենադարանի տնօրեն:

Սերոբյան Վաղարշակ սարկավագ - Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ:

Սիսյան Սոնյա - Բեյրութի Հայկազեան համալսարանի Պարսումյան և Տերյան հայագիտական գրադարանների տնօրեն:

Տեր-Վարդանյան Գևորգ - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության եւ Մայր ցուցակի բաժնի վարիչ:

Տոնանյան Մովսես վարդապետ - Զմմառի Փոխյալ Սուրբ Կույսի վանքի Մատենադարանապետ:

Փանոսյան Տիրայր արքեպիսկոպոս - Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանապետ:

Քեշիշյան Համազասպ վարդապետ - Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանապետի օգնական:

Քննարկումների արդյունքում արվեցին առաջարկներ, որոնք արժանացան համաժողովի մասնակիցների հավանությանը: Ստորև ներկայացնում ենք դրանք.

ա. «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» գրքի հրատարակությունից հետո անցել է շուրջ 30 տարի: Հայաստանում տեղի են ունեցել սոցիալ-քաղաքական հսկայական փոփոխություններ: Հարկ է վերաիմաստավորել «Հայ գրքի» հնատիպ շրջանի մատենագիտական նկարագրությունների ցանկերը, դրանք մոտեցնել հայ գրքի հնատիպ շրջանի լեզվամտածողության պահանջներին, ինչպես նաև հարկ է մատենագիտական նկարագրությունները կատարել հիմք ընդունելով նյութի նկարագրության միջազգային ստանդարտը: Ուստի հարկավոր է ձևավորել աշխատանքային խումբ, որը ձեռնամուխ կլինի «Հայ գրքի» հնատիպ շրջանի մատենագիտական նկարագրությունների իրականացման հայեցակարգի ձևավորմանը, ժամանակացույցի կազմմանը, աշխատանքների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների հաշվարկմանը և մասնագիտական խմբի անդամներին առաջադրվող պահանջների նկարագրմանը,

բ. հայ գրքի մասնագետների շրջանում սկսել քննարկումներ հայ հնատիպ գրքի հաշվարկման ներկա ժամանակահատվածը, այն է՝ 1512-1800 թթ., փոփոխելու, դարձնելով այն մինչև 1850 թվականը,

գ. համագործակցել «Վիքիմեդիա-Հայաստան» հիմնադրամի հետ, համայնքային գրադարանները դարձնելով հենակետային՝ Վիքիպեդիայի ձևավորման աշխատանքներում,

դ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայ Եկեղեցու թեմերում նվիրապետական աթոռներին կից ստեղծված գրադարաններում, գիտական կենտրոններում և մշակութային տներում առկա հավաքածուներում կան բազմաթիվ հնատիպ և վաղ շրջանի գրքեր և մամուլ, որոնք եզակի են, դիմել Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռների աթոռակալներին, թեմերի և միաբանությունների առաջնորդներին՝ թվայնացնելու համաշխարհային մշակութային եզակի նմուշներ հանդիսացող այդ հրատարակությունները, և տրամադրել դրանց թվային պատճենները Հայաստան ազգային գրադարանին և Ս. Էջմիածնի Մատենադարանին,

ե. կոչ անել Սփյուռքի հայագիտական կենտրոններին՝ տրամադրելու իրենց հայատառ հավաքածուների լրամշակված ցանկերը Հայաստանի ազգային գրադարանին և Ս. Էջմիածնի Մատենադարանին,

է. Սփյուռքի տարբեր գաղթօջախներում առկա և խնամքի ու հաշվառման կարիք ունեցող հավաքածուների մատենագիտական նկարագրությունները իրականացնելու եղանակներ փնտրել, օգտագործելով նաև դիվանագիտական ուղիները,

ը. աշխատանքներ տանել Սփյուռքում առկա լքյալ և վտանգված գրադարանները Հայաստան տեղափոխելու համար,

թ. Հայաստանի ազգային գրադարանի հիմքի վրա կազմակերպել հնգօրյա վերապատրաստման դասընթացներ՝ Սփյուռքի հայագիտական կենտրոնների գրադարանավարների համար, գրադարանավարների ճանապարհաձախսի և կեցության համար դրամական միջոցների առկայության պարագայում,

ժ. ստեղծել Հիմնադրամ լքյալ և վտանգված գրադարանների հավաքածուների Հայաստան տեղափոխման համար:

Պատրաստեց՝

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ


*«Բանբեր Հայաստանի գրադարանների»
հանդեսի պատասխանատու քարտուղար*







ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ԶԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ ԴԻՒԱՆԸ (Ծրագրի համառոտ բնութագիրը եւ ընթացքը)



Հայերէն գրքի ձեռագիր եւ հնատիպ տեսակները զուգահեռ-համատեղ կենցաղավարել են երկուսուկէս դարից աւելի. եթէ տպագրութիւնների սակաւութիւնը նկատի ունենալով՝ ԺԶ. դարը չհաշուենք, ապա ԺԷ., ԺԸ. դարերի եւ ԺԹ. դ. գրեթէ մինչեւ վերջ ընթացքում ձեռագիր գիրքը մեր իրականութեան մէջ տպագրին հաւասար թէ՛ գրւում

եւ թէ՛ գործածւում էր: Վանական, եկեղեցական եւ անձնական գրադարաններում գրքի երկու տեսակն էլ կողք-կողքի կային եւ հաւասար արժէք ու համարում ունէին:

Այսպէս օրինակ, ԺԷ. դ. վերջին կազմուած՝ Բաղէշի Ամրդօլու վանքի նշանաւոր եւ մեր գրքագիտութեան մէջ շատ արծարծուած գրացուցակի առաջին իսկ նկարագրութիւնը հետեւեալն է. «Ա. Նախ Ե. (5) Աստուածաշունչ, որոց յարկութիւնն այս է. Ա. (1) ընտիր եւ պատուական, ոսկով զարդարած, եւ Բ. (2) խամ գրչագիր կատարեալ, որ մինն է Աբրահամ վարդապետին, եւ մի այլ մագաղաթեայ կիսատ, եւ մի այլ պասմայ»¹. այսինքն՝ թուարկուած հինգից վերջին Աստուածաշունչը եղել է տպագիր, ըստ ամենայնի՝ Ոսկան Երեւանցու հրատարակութեան մի օրինակ: Աւելացնենք, որ այդ ցուցակում նշուած

¹ Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ Ցուցակ գրոց Ամրդօլու վանուց, Հրատ. Մենեքերիմ Տէր-Յակոբեան.- Արարատ, 1903, Բ-Գ, էջ 178:

«պասմա»՝ տպագիր գրքերի ընդհանուր քանակը 15 է¹:

Այսինքն՝ մեր գրքի երկու տեսակն էլ միասնական եւ միատեսակ գործածականութիւն ունէին, նաեւ՝ միատեսակ արժէք ու համարում. եթէ ձեռագրի հետագայ հերթական տէրը նրա մէջ գրառում էր անում, որով հաստատում էր, որ այն իրեն է պատկանում, կամ նոյն ձեռագրի մէջ անում էր իր ընտանեկան դէպքերի տարեգրական գրանցումները, ապա նոյնն անում էր նաեւ իրեն պատկանած հնատիպ գրքի մէջ: Այս առումով լաւ օրինակ է Երեւանի պետական համալսարանի գրադարանի հնատիպ մի Սաղմոսարանում² արուած տարեգրական ձեռագիր գրառումների ամբողջութիւնը, որի ուսումնասիրութեան հիման վրայ յայտնի հայագէտ Յակոբ Անասեանն իր «Ագուլիսի յիշատակարանը եւ Տէր-Մկրտչեանների ազգաբանութիւնը»³ հրապակման մէջ բացայայտել է Ագուլիսի ԺԹ. դարի պատմության ուշագրաւ դրուագներ, նաև՝ Տէր-Մկրտչեան տոհմի ընտանեկան տարեգրութիւնը՝ նրանց չորս սերնդի ծննդաբանութիւնն ու տոհմաձառը⁴:

Մի այլ տեսանկիւնից նայելով՝ հնատիպ գրքերի տպագիր (տպագրութեան հանգամանքներին վերաբերող) յիշատակարանները համարժէք են ձեռագրերի ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ յիշատակարաններին, իսկ նոյն գրքերի մէջ առկայ՝ ձեռքով գրուած յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները՝ ձեռագիր գրքերի ՀԵՏԱԳԱՅ յիշատակարաններին: Եթէ առաջինները գրքերի, այսպէս ասենք՝ Ծննդեան վկայականներն են, ապա երկրորդները նրանց հետագայ կենսագրութեան կամ ապրած կեանքի տարբեր դրուագների արձանագրումներն են:

Ընդհանրապէս այլ, առանձնապէս՝ քրիստոնեայ ժողովուրդների գրական մշակոյթների մէջ հնատիպ եւ հին գրքերի մէջ առկայ ձեռագիր եւ գրադարանային նշումների ուսումնասիրման, մշակման եւ հրապարակման ուղղութեամբ բաւական մեծ աշխատանք է արուած⁵, իսկ հայ իրականութեան մէջ, որքան գիտենք, կայ սոսկ նեղ խնդիր ունեցող դրուագային մի

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 178-189:

² Սաղմոսարան եւ Մխիթար Սեբաստացի, Տոմար կարճառօտ.- Վենետիկ: Հրատ. Մարգիս արքեպս. Սարաֆեանի, տպ. Անտոնի Բորտոլիի, 1748, 372, 48 էջ:


³ Յ. Ս. Անասեան: Մանր երկեր.- Լոս Անջելէս, 1987, էջ 841-855 (ԺԴ. 972 էջ):

⁴ Գ. Հ. Տէր-Վարդանեան (գրախօս.) Յ. Ս. Անասեան, Մանր երկեր.- Լոս Անջելէս, 1987, ԺԴ., 972 էջ: Պատմա-բանասիրական հանդէս.- Ե., 1990, № 4, էջ 238 (ամբողջը՝ էջ 236-242):

⁵ Ի դէպ, մեր օրերում նաեւ նշանաւոր մտաւորականների գրադարանների գրքերի մէջ նրանց տէրերի արած լուսանցագրութիւնների եւ գրառումների ուսումնասիրութեանն իրաւացիօրէն մեծ կարեւորութիւն է տրւում:

⁶ Տե՛ս «Պօղոսեան Նորայր, [Հայ հնատիպ գրքերի ձեռագիր յիշատակագրութիւններ \(1512-1712\)](#), Երեւան, ԵՊՀ հրատ., 2012, 86 էջ. հեղինակին 1512-1712 թթ. տպագրուած միայն «մօտ 50 գրքերում են... պատահել ձեռագիր յիշ-ներ» (էջ 6):

Տպագիր գրքերին վերաբերող կարելու մի այլ հանգամանք եւս. եթէ տպագրութեան յիշատակարանները նոյն գրքի բոլոր օրինակներում նոյնական, ուստի եւ՝ կատարելապէս նոյնն են¹, ապա նրանց մէջ առկայ ձեռագիր յիշատակարանները նոյն գրքի տարբեր օրինակներում անպայման տարբեր են: Իսկ սա նշանակում է, որ հնատիպ (եւ ընդհանրապէս՝ տպագիր) գրքերի ձեռագիր գրառումներ ուսումնասիրող-հրատարակողն իր նիւթը պէտք է փնտրի բոլոր հրատարակութիւնների՝ գոյութիւն ունեցող բոլոր օրինակների մէջ: Ահա հէնց սա՝ է հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների հետազօտման առաջին կարելու նախապայմանը:




Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաթնակաց.- Նոր Զուղա : Տպ. Ամենափրկիչ վանքի, 1688.- 764 էջ

Այս իրողութիւնները յստակ ցոյց են տալիս, որ ձեռագիր եւ հնատիպ գրքերի նկատմամբ մեր վերաբերմունքը պէտք է միանման-նոյնական լինի: Եւ քանի որ այսօր արդէն ունենք հայերէն հնատիպ գրքի հնարավոր չափով ամբողջական մատենագիտությունը², որի մէջ նշուած են կազմողներին հասու եղած հաստատութիւնների հնատիպ գրքերի գոյքահամարները, ուստի եւ այս արձանագրումներով առաջնորդուելով՝ պէտք է մի կողմից բոլոր հնատիպ գրքերը վերանկարագրել ձեռագրերի նկարագրութեան հարցակարգին

¹ Այսուհանդերձ յիշենք, որ կան նաեւ տպագիրների տարբեր տպաքանակների՝ միմեանցից ունեցած տարբերութիւններ, որոնք երբեմն վերաբերում են նաեւ յիշատակարաններին կամ նրանց առանձին հատուածների:

² Հայ գիրքը 1512-1800 թուականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն /Գազմեցին՝ Ն. Ոսկանեան, Բ. Կորկոտեան, Ա. Սաւալեան.- Ե., 1988, ԾԲ., 804 էջ:

մօտեցուած սկզբունքով, միւս կողմից՝ թերթել-ուսումնասիրել պահպանուած բոլոր հնատիպ գրքերի բոլոր օրինակները¹ եւ բոլորից քաղել ձեռագիր անգամ ամենամանր եւ երկրորդական թուացող բոլոր արձանագրումները, սրանց շարքում՝ նաեւ թանաքով եւ մատիտով արուած գրադարանային նշումները, որոնք հիմնականում կարող են լինել գրադարանային հին հաւաքածուների մէջ նոյն գրքերի ունեցած նախկին գոյքահամարներ: Վերջիններիս արձանագրումը նոյնպէս կարելի է, որովհետեւ գոյքահամարային տուեալների համադրումով հնարաւոր է լինելու պարզել ԺԸ-ԺԹ. դարերի մեր տարատեսակ գրադարանների կառուցուածքը կամ նրանց ունեցած գրքակազմը:



**Աւերարան.- Վենետիկ: Տպ. Միքէլանջելո Բարբոնիի, 1685-1686.-
18 չհ., 430, 2 չհ. (=450) երկսիւն էջ**

* * *

Այսպիսով, այս բոլոր իրողութիւնները հիմք ընդունելով, Հայաստանի Ազգային գրադարանում սկսուել է «Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր յիշատա-

¹ Մեր ծրագրի կարևոր մասն է կազմում այսօր արդէն ընթացքի մէջ գտնուող մատենագիտութեան հրապարակումից (1988 թ.) յետոյ գրադարանների ստացած հնատիպ գրքերի նոր օրինակների ներառումը, ինչպէս նաև՝ համացանցի եւրոպական եւ ամերիկեան տարբեր կայքերում առկայ թուային պատճենները: Արժէ նաեւ շրջել գիւղեգիւղ, տնէտուն եւ թերթ առ թերթ ուսումնասիրել պատահականութեան-քմահաճոյքին ենթակա բոլոր այն հնատիպ եւ հին գրքերը, որոնք ցրուած են անհատ մարդկանց տներում, գիւղական եկեղեցիներում եւ մատուռներում, քաղել նաեւ նրանց մէջ առկայ բոլոր յիշատակարանային ու ծննդաբանական գրառումները:

կարանների եւ գրադարանային նշումների դիվանի» կազմութեան աշխատանքը՝ գրքերում առկա ձեռագիր նշումները, հիշատակարանները, գրառումները, կնիքները ընտրելու, սքանալորելու, ստացված նյութն արձանագրելու և նկարագրելու իրականացումը: Մեր տպագիր գրքի այս մեծագոյն պահոցում 2016 թուականի դեկտեմբերի 31-ի դրութեամբ կայ 1512-1800 թթ. հայերէն հնատիպ 584 անուն գրքի 2378 միաւոր: Սրանցից 450-ն արդէն ուսումնասիրել ենք եւ մօտ 350ի մէջ արձանագրել ու քաղել տարատեսակ ձեռագիր եւ գրադարանային նշումներ: Հեռանկարում հայկական գրադարանային միւս հաստատութիւնների ունեցած հնատիպ գրքերը եւս զուգահեռաբար պէտք է ուսումնասիրուեն, ամբողջ նիւթը հաւաքելուց յետոյ որոշուելու են նոյն նիւթի դասդասման, մշակման եւ ներկայացման եղանակներն ու սկզբունքները: Արդիւնքում ստացուելու է մեր պատմութեան եւ գրական մշակոյթի մեծածաւալ, շատ կարեւոր եւ բազմաբովանդակ մի սկզբնաղբիւր, որ ունակ է լինելու տալ բազմաթիւ եւ բազմազան հարցերի պատասխաններ:

ԱԼԻՍԱ ԱԴԱՄՅԱՆ
*Հայաստանի ազգային գրադարանի
Անձեռնմխելի գրականության բաժին*

**ՀԱԳ-Ի ԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉԱՐՏԱՑՈՒՄԸ ԳՐՔԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ**

Հայ գրքարվեստի պատմության մեջ կան չպարզաբանված էջեր, որոնք ուսումնասիրման կարիք ունեն։ Կատարվող հետազոտական աշխատանքները, մատենագիտական պրպտումները, 21-րդ դարի տեղեկատվական նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գտնելու պատմության հարցականները, ինչպես նաև ամբողջացնել հայ գրքի պատմությունը, ինչին ձեռնամուխ է եղել Հայաստանի ազգային գրադարանը։ Որոնողական աշխատանքների ընթացքում կատարվեցին մատենագիտական ուսումնասիրություններ, սքանավորվեցին և թվայնացվեցին բոլոր այն հնատիպ գրքերը, որոնք բացակայում էին Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում։ Արդյունքում, «Հայ գիրքը 1512-1800 թթ.» էլեկտրոնային շտեմարանում ունենք 766 անուն հայերեն հնատիպ գրքերի մատենագիտական նկարագրություններ՝ իրենց թվային տարբերակներով։

Հայաստանի ազգային գրադարանի հայերեն հնատիպ հավաքածուն յուրաքանչյուր տարի համալրվում է նվիրատվությունների կամ գնումների միջոցով։ Այսպիսով՝ 2013-2016 թվականների ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի հայերեն հնատիպ գրականությունը համալրվել է 87 միավորով, որից 68 միավորը՝ գրադարանի այլ բաժիններից, 19-ը՝ գնումների կամ նվիրատվությունների միջոցով։

Այժմ Ազգային գրադարանի հայերեն հնատիպ հավաքածուն կազմում է 2.378 միավոր։


Բազմակի ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում պարզվեց, որ Հայաստանի ազգային գրադարանի հայերեն հնատիպ հավաքածուում կան 59 անուն հնատիպ գրքեր, որոնցից 56-ը հայ գրքի մատենագիտական ցանկում¹ նշված են աստղանիշով, իսկ 3 հմայիլները ընդհանրապես չեն ներառվել մատենագիտական ցանկի մեջ։


¹ Նկատի ունենք՝ Հայ գիրքը 1512-1800 թվականներին։ Հայ հնատիպ գրքի մատենագիտություն /Գազմեցին Ոսկանյան Նինել և ուրիշներ.- Ե., 1988.- 864 էջ։

Ներկայացնենք մշակման արդյունքում հայտնաբերված այդ գրքերը: Նշենք նաև, որ ստուգման աշխատանքները շարունակվում են, և հաջորդաբար կներկայացնենք այլ գրքեր, որոնք նախկինում դուրս են մնացել գրացուցակներից Այսօր այդ գրքերն առկա են Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում:

Տօմար Գրիգորեան /Աշխատասիրությամբ Հովհաննես Տերզնցու և Սուլթանշահի.- Հոռոմ: Տպ. Դոմինիցի Բագաեի, 1584.- 111չհ. զարդափակ էջ: Տիտղոս.՝ՏՕՄԱՐ ԳՐԻԳՈՐԻԵԱՆՆ/ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ/ ՈՐ ԵՂԵԻԻՇԽԱՆՈՒ ԹԵԱՄԲ /ՀԸԶՕՐ ՍՐԲՈՅ ՓԱՓՈՅՆ/ ԵՒ ԱՅԼ ԹԱԳԱԻ/ՈՐԱՅՆ/կազմեցաւ ի մե ծըն հռովմըն ի քաղաքն սրբոց /առաքելոցն Ի թ[ի]վ. ոչձդ:ROMAE,/EX Typographia Dominisi Basae./ MDLXXXIIII./ Տիտղոսաթերթի դարձերեսը և 75րդ էջը դատարկ: Հայերեն բոլորա գրերով նշված են միայն մամուլները, վերջին մամուլն է ԺԴ: Շարվածքի չափը՝ 17X11սմ: Տիտղոսաթերթը՝ զարդափակ, հրատարակության վայրի նշումից առաջ՝զարդանկար (Վատիկանի վեհանշանը): Բնագիրը և տիտղոսաթերթը՝ երկգույն՝ կարմիր և սև տառերով: 1 փորագիր պատկեր ԺԴ մամուլի 7- րդ էջին, գլխազարդեր և զարդագրեր: Տպագրությունը 12 կետաչափի գրանժոնյան բոլորագրերով, օգտագործված են նաև գլխագրեր: Հիշատակարան ունի: Գիրքը նկարագրվել է մատենագիտության մեջ 14 համարի ներքո, աստղանիշով¹: Մ 30, 29 պակասում է Ա մամուլի առաջին թերթը և վերջից 42 էջ: ԱԳԹ: ՍՂՄ:ՎՄՄ: ԵՍՀՄ: ԲԹ: ՕԲԳ: ԼՎԱԱԹ: ՄԲԳ: ՄԱԳԳ: ՓՄԳ: ՋՄՄ: ՊՖ: Զ Մատ. 679-680, Պատմ. 56-58: Լ հտ. 1, 104: Թ 41-42: ԳԼ 13, ԱԼ. 48:	
Խորհրդատետր /Տպագր. Խաչատուր Կեսարացու.-Նոր Զուղա: Տպ. Ամենափրկիչ վանքի, 1641.- ԽԷ (47) երկայուն էջ: Տիտղոսաթերթ չունի, սկսվում է ՈՐ՝ ԶԳԵՅ Եալ ես զլոյս... նախադասությամբ: Քառաձալ, առանց մամուլանիշերի: Շարվ. չափը՝ 17X13 սմ:Ձեռագիր Լուսանցանիշեր: 1 գլխազարդ՝ Ա էջում,4 զարդագիր՝ Ա, Ը, ԺԶ, ԻԳ էջերում:Բնագիրը 16 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև 10 կետաչափի բոլորագիր և գլխագրեր: Տիպը՝ կարմիր և սև: Գրքի ԺԹ(19), ԻԱ(21), ԽԴ (44), ԽԵ (45) էջերին չեն նշված էջահամարներ: Այնուհետև ԽԶ (46) էջին դրված է ԽԵ(45) էջահամարը, որի հետևանքովընդհանուր էջակալումը խախտվել է. վերջին էջի համարն է ԽԷ (47'), փոխանակ ԽԸ(48): Գիրքը նկարագրվել է մատենագիտության մեջ 31 համարի ներքո:	

¹ Հայ գիրքը 1512-1800 թվականներին: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն /Կազմեցին Ոսկանյան Նինել և ուրիշներ.- Ե., 1988.- 864 էջ: Բոլոր գրքերի մատենագիտական նկարագրությունները կատարվել են այս գրքից:

Մ 1702: ԼՄԳ: ՏՊ «Բ», 1905, էջ 108: ԼՄ «Ն» (25-27: ՇՇ «Է ՋՄ.»), 1962, N ԺԲ, 46-51: ԼՄ «Սիոն», 1966, էջ 357: Կ-Ո «Գ» 1970, N 5:	
Սաղմոսարան /Տպագր. Ավետիս Դլիճենցի և Կարապետ Անդրիանացու.- Ամստերդամ: Տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1661-1662.- 764 էջ: Ծանոթ.՝ Գրքում պակասում են 289, 290, 423, 424, 427, 428 էջերը, կան տպագրական վրիպակներ կապված հետևյալ էջերի դասավորվածության հետ՝ 92, 95, 96, 93, 94, 97, նաև 602 էջի փոխարեն տպագրված է 502, 604-ը 504: Շարվածքի չափեր՝ 12,5X8 սմ: Հիշատակարան ունի: Գիրքը նկարագրվել է մատենագիտության մեջ 51 համարի ներքո, աստղանիշով, ուր նշված է նաև, որ նկարագրությունը կատարված է ըստ Գ. Զարբհանյանի և «Սիոն» ամսագրի (1966, էջ 151-153): ՍՂՄ: ԵՍՀՄ: ԱՀԳ: ԱԱ: ԲՐԳ: ԲԹ: Զ Մատ. 598-601, Պատմ. 100-101: Լ հտ. 1, 263: ԱԼ 111: ԱԳ «Սիոն», 1966, N 1-2, էջ 151-153,	
Այբբենարան /Տպագր.՝ Սողոմոն Լևոնյանի.- Մարսել: Տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1675.- 94 էջ: Տիտղթ.՝ ԳԻՐԳ /ԱՅԲՈՒԲԵՆԻՑ/ Եւ կերպ ուսանելոյ զլեզուն ի/տալական ո-ճի: Քերական/նութեան/ Այլև կանոնք ոմանք Աստեղա/բաշխականք վասն պահպանելոյ զառողջութիւն մարմնոյ:/ Տպագրեցեալ ի տպարանի սրբոյ Էջմի/ածնի և սրբոյն Սարգսի զօրավարին:/ Ի հայրապետութեան Տ[եառ]ն Յա/կոբայ ամենից Հայոց Կաթողի/կոսի, արդեամբք և գոյիք Սո/ղոմոնի պաշտօնատարի:/ Ի ՄԱՐԶԻԼԻԱՅ:/ թուին Ք[րիստոս]ի 1675: Ծանոթ.՝ Գրքում 17, 18, 71-79 էջահամարները կրկնված են, այդ պատճառով էլ բովանդակության մեջ հիշյալ համարները նշված են երկու անգամ, էջ՝ 30, 31 բացակա են: Տիտղթ. չունի: Ութածալ, մամուլանիշերը՝ հայատառ և արաբական թվանշաններով: Գլխազարդեր և վերջազարդեր: Բնագիրը՝ 10 կետաչափի, բոլորագրով, օգտագործված են նաև նոտրգիր և գլխագրեր: Շարվ. չափը՝ 9,2X6 սմ: Հիշատակարան ունի: Մ 253 տիտղթ. և 3031 էջերը պոկված են: ՍՂՄ: ԿԿՄ: ՓՊԱԳ: ՈՒԿՐԳ: ՄԲ: ԱԲ:ԶՄՄ: Զ Մատ. 26, Պատմ. 131: Ղ հտ. 1, 132: Թ 157: ԳԼ 111: Գիրքը նկարագրվել է մատենագիտության մեջ 94 համարի ներքո, աստղանիշով:	

Ներսէս Շնորհալի: Յիսուս որդի.- Վենետիկ: Տպ. Նահապետ Գյուլնազարի և Զիականո Մորետտիի, 1686.- 416 (նժգ) գծափակ էջ: Տիտղոսաթերթն ընկած է: Ութաձալ մամուլանիշերը հայատառ: Շարվածքի չափը շրջանակով՝ 12X7 սմ: 3 փորագիր պատկեր՝ 134, 195 և 266 էջերում, վրան և «GRF» տառերը (հավանաբար փորագրողի անվան սկզբնատառերն են): Վերջին 2 պատկերների դարձերեսները չտպագրված՝ վրան զարդանկար: 135, 195, 267, 334 էջերի վրա տպարանատերերի անունների առաջին տառերը: Գլխազարդեր, վերջազարդեր լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը 12 կետաչափի բոլորագրով, օգտագործված են նաև 8 կետաչափի բոլորագիր, նոտրգիր և գլխագրեր: Հիշատակարան ունի: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 978 համարի ներքո, աստղանիշով, ուր նշված է, որ Ա. Ղազիկյանի ծեռքի տակ եղած օրինակը ևս տիտղթ. չի ունեցել: Հրատարակության տարեթվի, տպագրության վայրի և տպարանի մասին տեղեկությունները քաղված են գրքի հիշատակարանից, որտեղ եղած հայկականտարեթիվը՝ ՌՃԵ (=1656) չի համապատասխանում 1686 թվականին: Պատճառը, հավանաբար հայկական թվականում տեղ գտած վրիպակն է (դուրս է ընկել Լտառը): ԱԿԳ առանց տիտղթ.: ՎՄՄ: ՍՂՄ: ԵՍՀՄ: ՕՍԱԵ: ՀԳ 4 էջ լուս.: Ղ հտ. 2, 229: ԱԳ «Սիրոն», 1967, N 7-8, էջ 340-341:	
Սաղմոսարան.- Վենետիկ: Տպ. Անտոնի Բորտոլիի, 1695.- 368 գծափակ էջ: Տիտղթ.՝ՍԱՂՄՈՍ/Ի ԴԱԻԻԹ /Փոքր Սաղ/մոս որ և Սաղմոսարան կոչի Տպա / գրեալ եղև ի գեղեցկաշեն մայրաքաղաքն) Վանատիկ ի տունն Աթոնիոս Պորթոյի Ի թ/վականութեանն Հայոց մեծաց: ոճխգ:/ Ծանոթ.՝ Թվայնացված գիրքը թերի օրինակ է, սկսվում է 21-րդ էջից: Բացակա են հետևյալ էջերը՝ 337-340, 347, 348, 351, 352, 357, 358, կա տպագրական վրիպակ՝ 349 էջի փոխարեն տպված է 449, 356-ը՝ 256: Տպակից է՝ Պարզատոմար (1695) գրքին: Շարվ. չափը՝ 12,5x7,5 սմ: Էջակալումը հայկական և արաբական թվանշաններով: Մամուլանիշերը՝ Լատինատառ: Գլխազարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը՝ բոլորագրերով: Խիստ թերի լինելու պատճառով Ազգային գրադարանի օրինակը գրանցված է եղել, որպես 1873 թվականի Սաղմոսարան, սակայն ստուգումների արդյունքում պարզվել և գրանցվել է ճիշտ տարեթիվը՝ 1695: Գիրքը նկարագրվել է մատենագիտության մեջ 159 համարի ներքո, աստղանիշով, ուր նշված է, որ նկարագրությունը կատարված է ըստ Գ. Բամպուրջյանի տված տեղեկության և Վ. Ներսեսյանի ուղարկած լուսապատճենի: Վերջինիս տիտղոսաթերթին հայոց թվականը ոճխգ (1694) է: ԲԹ: ՀԳ 2 էջ լուս: ՊԱՊ սկզբից մինչև 20րդ էջը պակասում է:	

Շարունակելի...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ)

*(Հայաստանի Հանրապետությունում գործող գրադարանների
վիճակագրական հաշվետվությունների վերլուծության մասին)*

Ժամանակակից գրադարաններին մեծապես հետաքրքրում է այն հարցը, թե ընթերցողները ինչ են ուզում և ինչու են հատկապես դա ուզում: Այս խնդիրների արդյունավետ լուծման համար օգնող օղակ է հանդիսանում վիճակագրական հարցումների անցկացումը: Վիճակագրությունը հետազոտում է գրադարանային իրականության դրսևորումների քանակական կողմը՝ հավաքածուի համալրումը, սպասարկումը, տեղեկատու-մատենագիտական աշխատանքները, տեղեկատվության որոնումը և այլն, դրանց՝ տեղի ու ժամանակի առանձնահատկություններով պայմանավորված որակական բովանդակության հետ անխզելի կապի համադրությամբ:

Մեր գլխավոր նպատակն է՝ վիճակագրական հետազոտության մեջ ամբողջապես ընդգրկել Հայաստանի գրադարանային համակարգի խնդիրները և փորձել ստացված արդյունքների վերլուծության հիման վրա մշակել գրադարանների զարգացման ռազմավարությունը, վերափոխել շուկայում ունեցած դիրքերը և գրավել նոր մասնաբաժիններ:

2016 թվականի ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը իրականացրեց Հայաստանի համայնքային գրադարանների վիճակագրական հետազոտությունը (նախապես սահմանված ձևանմուշի հիման վրա): Աշխատանքի վերլուծությունն իրականացրել է Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժինը:

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի համայնքային գրադարանները (Լոռու մարզի կողմից ստացված տվյալները չէին համապատասխանում հիմնական սկզբունքին և առաջադրված պահանջին, այդ իսկ պատճառով էլ այդ մարզի մասին վիճակագրական տվյալներ ընդգրկված չեն):

Տեղեկատվության հավաքագրման մեթոդը: Հայաստանի Հանրապետությունում գործող գրադարանների գործունեությունը բնութագրելիս հարցաթերթային հարցման մեթոդի միջոցով փորձել ենք պարզել Հայաստանի Հանրապետությունում գործող և փակված գրադարանների թիվը, գործող գրադարանների հավաքածուների վիճակը, տեխնիկական հագեցվածությունը, բյուջեն, աշխատակիցների քանակը և այլն: (հիմք է հանդիսացել նախապես սահմանված ձևանմուշը):

Հ/Հ	Մարզի անվանումը	Համայնքների ընդհանուր թիվը	Գործող գրադարանների թիվը	Չգործող գրադարանների թիվը	Համայնքներ, որոնց մասին տեղեկություններ չկան (ընդհանուր թիվը)
1.	Արագածոտն	114	69	35	10
2.	Արարատ	97	61	5	31
3.	Արմավիր	98	70	17	11
4.	Գեղարքունիք	91	32	11	48
5.	Կոտայք	67	58	3	6
6.	Շիրակ	119	79	37	3
7.	Սյունիք	110	83	7	20
8.	Վայոց ձոր	44	42	2	0
9.	Տավուշ	62	18	5	39
			512	122	168

Նշենք նաև, որ Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժինը ամեն տարի իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանների տարեկան վիճակագրական հաշվետվությունների վերլուծությունը:

Վերլուծական հետազոտության համար հիմք է հանդիսանում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետական հաշվետվությունների 2015 թ. (Ձև N 6-գմ) ձևաչափը:

Արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը

Հ/Հ	Մարզի անվանումը	Գործող գրադարանների թիվը
1.	Արագածոտն	71
2.	Արարատ	93
3.	Արմավիր	84
4.	Գեղարքունիք	86
5.	Լոռի	70
6.	Կոտայք	62
7.	Շիրակ	95
8.	Սյունիք	129
9.	Վայոց ձոր	44
10.	Տավուշ	65
	Ընդամենը	799

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետական հաշվետվությունների 2015 թվականի տրամադրած տվյալների, Հայաստանի Հանրապետությունում գործում է 799 գրադարան, որը գրեթե հավասար է համայնքների ընդհանուր թվին:

Այժմ զուգահեռ ներկայացնենք **գործող գրադարանների** վերաբերյալ ՀԱԳ-ի իրականացրած Հայաստանի մարզային և համայնքային գրադարանների վիճակագրական հետազոտությունը և Հայաստանի ազգային գրադարանում կողմից կազմվող Հայաստանի Հանրապետության գրադարանների տարեկան վիճակագրական հաշվետվությունների վերլուծությունը, որը կազմվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետական հաշվետվությունների սահմանված ձևաչափի հիման վրա:

ՄԱՐԶԸ	ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԳ-Ի ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱԳԱԾՈՏՆ	71	69
ԱՐԱՐԱՏ	93	61
ԱՐՄԱՎԻՐ	84	70
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	86	32
ԼՈՌԻ	70	0
ԿՈՏԱՅՔ	62	58
ՇԻՐԱԿ	95	79
ՍՅՈՒՆԻՔ	129	83
ՎԱՅՈՑ ՁՈՐ	44	42

ՏԱՎՈՒՇ	65	18
--------	----	----

Երկու հետազոտությունների արդյունքները բավականին տարբեր են, ինչը հաստատում է, որ չենք կարող ամբողջական թիվ ունենալ գործող գրադարանների վերաբերյալ:

Կարծում ենք՝ գրադարանների վիճակագրական վերլուծությունները պետք է տեղափոխել նոր հարթակ՝ հնարավորություն ընձեռելով կատարելու ուսումնասիրություններ, ինչի արդյունքում կունենանք հստակ պատկեր, թե քանի գրադարան է գործում Հայաստանի Հանրապետությունում և ինչ խնդիրներ կան գործող գրադարաններում: